Ժ. ՏԱՐԻ 2679 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 27 ՔԱՂՈՑ 4385 4 ՅՈՒՆՎԱՐ 1893 28 ՋԻՄԱԶԻԼ ԱԽԸՐ 1310 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه ده غلطه ده آره ولك غزته سی اداره سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ	150
» »	Վեցամսեայ	»	75
» »	Եռամսեայ	» »	40
Օտար երկիրներէ	Տարեկան	ֆրանք	56
» »	Վեցամսեայ	»	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր-թղթոց	Տարեկան	Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի [illegible]		Դրուշ	50

Խմբագրութեան ուղղուած [illegible] չդարձուիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 4/16 ՅՈՒՆՈՒԱՐ, 1893

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէպէտ ժամանակէ մ'ի վեր շատ բաներ կը գրուին Ֆրանսացի ժողովրդեան տեսակ մը սեղանաւորներու և գործիչներու երեսէն կրած դրամական մեծամեծ կորուստներուն վրայ, բայց ականջ մ' կախէք, դարձեալ շատ հարուստ ժողովուրդ են Ֆրանսացիք։

Պանամայի ընկերութեան մէջ իբր մէկ ու կէս միլիառ ֆրանք կորսուեցաւ Ֆրանսա։ Ճշդիւ խօսելով, այս դրամին կէսէն աւելին Ֆրանսայի մէջ մնաց. բայց ինչ և է, քանի որ բաժնետէրներուն և պահանջատէրներուն ձեռքն այսօր բան չկայ, կորսուած կը համարուի։ Բայց միթէ 1870—71ի աղետալի պատերազմէն և հինգ միլիառ տուգանքի վճարումէն ի վեր Ֆրանսացւոց միա՞կ կորուստն էր Պանաման։ Հապա սեղանաւորական տագնապնե՞րն որք այն պատերազմէն մինչեւ 1881 պատահեցան. հապա Իւնիօն Ժէնէրալի կործանո՞ւմն. հապա Պղինձի շահադիտութեան և Քոնթուառի ձախողո՞ւածն, որ ինքնին 200 միլիոն ֆր.ի չափ կորուստ պատճառեց։ Հապա այն կարգ մը սեղանաւորական խարդախութիւնք և առաւ-փախաւութի՞ւնք, որք ժամանակէ մ'ի վեր կարծես թէ աւելի առատութեամբ կը յաճախեն։

Բայց ունեցողի՛ն փարան կը գողնան. Զունեցողին ի՞նչը կ'առնեն։ Ամեն երկիր կրնա՞յ միթէ միլիառ ու կէս ստորագրուիլ աշխարհի անդիի ծայրը կատարուելիք ձեռնարկութեան մը համար։ Ազգ մը նախ կարող ըլլալու է այսչափ մեծաքանակ գումարներ տրամադրելի ունենալու, որպէս զի օրին մէկն ալ զանոնք կորսնցնել կարենայ։ Այսպիսի ձախողուածներ և կորուստներ ալ անուղղակի ապացոյցներ են Ֆրանսայի հարստութեան։ Աւելի մեծ ապացոյց մ'այն է որ այս ամեն յուսախաբութիւնք, այս ամեն գողութիւնք զգալի չեն ըլլար Ֆրանսացի ժողովրդեան հարստութեան ընդհանուր գումարին մէջ։

Ուշադրութիւն ընողն անցեալ օր Արեւելքի մէջ զարմանալի հաշիւ մը տեսաւ այս մասին։ Պանամայի դատին սկսելէն ի վեր Փարիզի մէջ արժեթղթոց անկման վրայ խօսելով, կը յիշեցնէինք թէ ֆրանսացի ժողովրդեան ձեռքը գտնուած ազգային և օտարազգի կարեւոր արժեթղթոց, պարտաթղթոց կամ բաժնեթղթոց գումարը 60 միլիառ ֆր. կը հաշուուի, թո՛ղ զկանայս և զմանկունս, մանր մունր թուղթերու և բաժիններու հաշիւն։ Այս մանր մունր հաշիներն ալ արհամարհելի չեն. զի Ֆրանքն՝ սանդուխէն ի վեր՝ Սանթիմներէ կազմուած է։ Եւ հիմակուան միկրոբային դարուս մէջ, հարստութեան այս միկրոբն ալ, սանթիմը կամ փարան, կարեւորագոյն տարրն է հարստութիւնները թէ՛ կազմելու և թէ փճացնելու համար։

Ասոր մէկ նոր օրինակը պիտի տանք, զոր միկրոբային գիտութենէն փոխ չենք առնուր այս անգամ, այլ Ֆրանսայի կառավարական վիճակագրէ մը, որ ցոյց պիտի տայ մեզ թէ ֆրանսացի ժողովրդեան խոնարհագոյն դասերը, գործաւորները, փոքր խանութպանները, ամսականաւոր փոքր պաշտօնեայները, գրագիրներն, հասարակ երկրագործներն, և այլն, •••-երը կամ 10 փարանոցները քով քովի դնելով՝ տարուէ տարի ի՜նչ հարստութիւն կը կազմեն։

Այս •••-եր առաջ դրամատուներու մէջ չէին պահուեր, ուրիշ տեսակ դրամարկղի մը մէջ կը պահուէին, որոյ կառուցման ո՛չ երկաթ գործածուած էր, ո՛չ մարմարիոն, ո՛չ որձաքար։ Հինցած ծակծկած բուրդէ գուլպայները կարկտելով, Ֆրանսացի տանտիկինք և խնայասէր մարդիկ անոր մէջ կը պահեն եղեր իրենց ամենափոքրիկ, միկրոբային խնայութիւններն, այսինքն՝ պղնձէ •••-երն և ֆրանքի արծաթեայ կտորուանքներն, որք ապա կը փոխանակուէին՝ պղինձն արծաթին հետ, արծաթն ալ ոսկիին հետ, և ամեն ֆրանսական տան մէջ, քաղաքին թէ գիւղին մէջ, ինչպէս սան մը կը գտնուէր՝ կիւրակի օրերը միս խաշելու համար, ըստ հին բարի աւանդութեան, անանկ ալ բրդէ հին գուլպայ մը կը գտնուէր, աւելցած բարաներն, ամենէն կարեւոր բաներէն անգամ խնայուած սակներն անոր մէջ պահելու նպատակաւ։ Ասոր համար դարէ ի վեր հռչակաւոր են ֆրանսական գուլպայներն, ո՛չ թէ այն փուտ «ֆրանսական գուլպայները» զորս Բերայի և Ղալաթիոյ վաճառատուներէն կը գնենք՝ ցուրտ եղանակիս մէջ [illegible] կերպիւ մեր ոտերը տաքցնելու համար, այլ ֆրանսացի տանտիկիններուն իրե՛նց ձեռօք հիւսած և իրե՛նց վրայ հինցուցած գուլպաներն, որք օր մըն ալ մէկտեղելով, Ֆրանսայի Պանքան կառուցին իրենց ոսկեբարձ թելերով։

Հիմակ ալ, եթէ հետաքրքրուիք, այս բրդէ գուլպան կայ ու կը գործէ, մանաւանդ փոքր քաղաքներու և գիւղերու մէջ։ Բայց հիմա խնայութեան համար մեծագոյն դիւրութիւններ կան, շնորհիւ պաշտօնական եւ մասնաւոր հաստատութիւններու, որք ո՛չ միայն դրամը կը պահեն, այլ և կը շահագործեն. Աւելի շահ խնդրողներ կը դիմեն սեղանաւորներուն, որք օր մըն ալ իրեն հետ կը տանին երկաթեայ արկղն որուն մէջ այնքան բուրդէ գուլպայներ իրենց պարունակութիւնը թափեր էին պարբերաբար։ Աւելի խոհեմները կը դիմեն կառավարական հաստատութեանց, որք թէպէտ քիչ տոկոս կուտան (հազիւ 100ին 3), բայց գոնէ դրամագլխին չեն դպչիր։

Յայտնի է թէ 1882էն ի վեր Ֆրանսա և ունի «Թղթատարական Խնայողական Սնտուկ» մը, այսինքն՝ ո՛չ թէ թղթատարական պաշտօնէից խնայողութեան սնտուկն որ զատ բան մ'է, այլ խնայողութեան արկղ մը ուր մինչեւ 20 փարանոց դրոշմ կ'ընդունուի, եւ այս պատճառաւ և նամակատուներու շատութեան պատճառաւ, խնայողութեան այս համեստ ձեւը քաջալերելու գործն յանձնուած է նամակատանց վարչութեան, որ իւր ամեն պաշտօնարանին, ամեն մասնաճիւղին յարակից ունի այս համեստ խնայողութիւններն ընդունող սնտուկ մը։

Արդ, Թղթատարական սնտուկն իւր հաստատութեան տարին ընդունած էր 473,155 անձերու խնայողութիւններն, ընդ ամենայն 64,634,381 ֆր.ի գումար մը։

Տասն տարի ետք, 1892ի սկիզբն, այս գումար բարձրացած էր կէս միլիառ 6,380,000 ֆր.ի, զոր բերած յանձնած են մէկ միլիոն 733,760 անձինք։

Աւելի քան կէս միլիառ ֆրանք՝ ամենափոքր խնայութիւններէ կազմուած։

Այս հաստատութիւններէն անջատ կերպիւ կը շարունակեն և կը գործեն սովորական խնայութեան արկղներն, որք անցեալ տարւոյ սկիզբն ունէին երեք միլիառ 53 միլիոն ֆրանք, զոր յանձնած են իբր վեց միլիոն անձինք։ Միացնելով այս երկու գումարներ, կը գտնենք որ ֆրանսացի ժողովրդեան խոնարհագոյն կարգերուն խնայութիւններն հնչուն դրամով երեք ու կէս միլիառ ֆր.էն աւելի էին անցեալ տարւոյ սկիզբն, և հիմակ ա՛լ աւելի են անշուշտ։

Այս թուոց նշանակութիւնը լիովին ըմբռնելու համար, յիշել պէտք է թէ քիչ շատ բարեկեցիկ անձինք այս սնտուկներուն չեն դիմեր, այլ իրենց դրամը պանքաներու կամ սեղանաւորներու քով կը դնեն, հաշուընթացով, կամ արժեթուղթ և կամ կալուած գնելու կը գործածեն։ Օրէնքով չափ մը դրուած է թղթատարական և սովորական խնայութեան սնտուկներն ընդունելիք գումարներու։

Եւ իրօք, թղթատարական սնտուկներու մէջ դրուած խնայութեանց մէկ երրորդը կազմուած է 20 ֆրանքէ և անկէ պակաս գումարներէ։ Թուրքիացի մը երբեք մտքէն կրնա՞յ անցունել թէ մէճիտիյէէն պակաս գումար մը խնայուի և շահու դրուի։ Բայց Ֆրանսացիք որք թէ՛ անհատապէս և թէ հաւաքապէս մեզմէ աւելի հարուստ են, չեն արհամարհեր ղրուշներու և քառորդ մէճիտիյէներու խնայումը, զորս հանրային սնտուկի մը կը բերեն կը յանձնեն նախ ապահովութեան և ապա շահագործութեան նպատակաւ։

Եթէ խնայութեան թղթատարական սնտուկներուն մէջ դրամ ունեցող մէկ միլիոն 733,760 անձերէն մէկ երրորդը 20 ֆր. կամ անկէ պակաս ունին, 20էն մինչեւ 100 ֆր. ունեցողներն ալ մէկ հինգերորդ մասն են, իսկ 1,000 ֆր. է աւելի ունեցողներ ամբողջին հազիւ մէկ տասներորդ մասն են։

Թղթատարական դրոշմներու (բուլլերու) միջոցաւ 20 փարանոց անգամ հաւաքելու և պահպանելու այս հանճարեղ դրութիւն ամենէն աւելի Անգլիոյ մէջ տարածուած է։ Հոն թղթատարական սնտուկներն 1892ի սկիզբն ունէին մէկ միլիառ 804 միլիոն ֆր. այս հաշուէ։ Թէպէտ համեմատապէս նոր մտած է այս ճամբու մէջ, բայց Ֆրանսա Անգլիայէն անմիջապէս ետքը կուգայ իւր կէս միլիառով։ Երրորդ կարգը կը պատկանի Իտալիոյ 321 միլիոն ֆր.ով։ Ապա կուգայ փոքրիկն Պելճիա 206 միլիոնով։ Աւստրիա 155 միլիոն ֆր., Հոլանտա 50 միլիոն, Հունգարիա և Շուէտ 23ական միլիոն հաւաքած են նամակատանց խնայողական սնտուկներուն մէջ։ Գերմանիոյ մէջ այս դրութիւն տակաւին մուտ գտած չէ, բայց հոն փոքրիկ պանքաներու դրութիւնն այնքան ծաւալած է, «ժողովրդային պանքաներ», «փոխադարձ օգնութեան պանքաներ», տնտեսագէտ Շուլցէ Տէլիչի հիմնած այս օրինակ հաստատութիւնք այնքան զարգացած են որ ցայսօր թղթատարական խնայութեան սնտուկներու հաստատման պէտքն զգալի եղած չէ, բայց կ'երեւի թէ հոն ալ պիտի հաստատուի, թէպէտ ասիկա լոկ ներքին վարչութեան խնդիր մ'ըլլալով, գերման կայսրութենէն աւելի Գերմանիոյ մասնաւոր կառավարութիւններէն կախում ունի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ. —Երեսփ. Ժողովն իւր դեր-նախագահներէն երեքը վերընտրեց, բաւ համարելով մէկ փոփոխութիւն միայն, Պ. Ֆլօքէի տեղ Պ. Քազիմիր Բէրիէի ընտրութիւնն իբրեւ Նախագահ։ Ծերակոյտին մէջ, նորընտիր Նախագահ Պ. Լըռուայէ իւր աթոռը վերաբազմելով, ըսաւ թէ «մի քանի անձերու թերութիւնք և տկարութիւնք չեն կրնար Հանրապետութեան վերագրուիլ։»

—Դեր-ծովակալ Ժերվէ, Քրոնշդատի ֆրանքառուս նաւային յոյցին հերոսը, մերժեց ծովային Նախարարի պաշտօնն որ իրեն կ'առաջարկուէր, բոլոր զօրութեամբ Նաւատորմի վերակազմութեան գործին պարապելու համար իբրեւ պետ Նաւատորմի սպայակոյտին։

ՀԱՐՍՆԻՔԸ Ի ԶԻԿՄԱՐԻՆԿԷՆ. — Անցեալ կիւրակի, Մարի իշխանուհին, իւր հօր՝ Էտինպըրկի դքսին, իւր մօր և իւր քոյրերուն հետ Անգլիայէն եկաւ Զիկմարինկէն։ Գերմանական այն փոքրիկ քաղաքին բնակիչներէն քանի մը հազար հոգիք ցուրտ օդով մը համախմբուեր էին կայարանին մէջ որ շքեղապէս զարդարուած էր, և փողոցներուն մէջ, ուսկից թափորը պիտի անցնէր դէպ իշխանական դղեակն, որ ամեն կողմէ Դանուբով շրջապատեալ այն գեղատեսիլ քաղաքին գագաթը կը զարդարէ։ Երբ կառախումբն երեւցաւ, Հօհէնձօլլէրն իշխան, Ռումանիոյ գահաժառանգին հայրն, իւր միւս երկու որդւոց և հետեւորդաց հետ դուրս եկաւ կայարանի սպասման սրահէն։ Ամենքն ալ համազգեստներով էին և ռումանական պատուանշաններ կախած։ Դքսական գերդաստանը բերող շոգեկառքը կանգ առնելուն, Հօհէնձօլլէրն իշխան առաջ անցաւ, և սիրալիր կերպիւ ողջունեց Էտինպըրկի դքսուհին, ըսելով. «Ջերմագին բարիգալուստ մը ձեզ՝ այս ցրտագին եղանակիս մէջ։» — «Անանկ է, ըսաւ դքսուհին ժպտելով, անանկ է անխնդիր բան է որ այսչափ մարդիկ բաց գլխով կենան»։ Իւր մօր ետեւէն, Մարի իշխանուհին ելաւ շոգեկառքէն, և փեսին հայրն, Հօհէնձօլլէրն իշխան, ջերմագին համբոյրով մը ողջունեց զնա։ Ամեն աչքեր այն ատեն դարձան Ֆէրտինանտ իշխանին՝ Ռումանիոյ գահաժառանգին վրայ, որ յառաջ անցնելով պարզ եւ սիրաշեղուն ձեւով մը ողջունեց իւր խօսեցեալը։ Կայարանի սպասման սրահին մէջ կը սպասէր փեսին մայրն, Հօհէնձօլլէրն իշխանուհին, որ ընդունեց իւր հարսնցուն և խնամիներն։ Ապա, խուռն բազմութեան կեցցէներուն և դղեակի պարիսպներէն արձակուող թնդանօթներու աղմուկին մէջէն, ամենքն ալ կառք նստած գացին իշխանական դղեակը։ Ռումանիոյ թագաւորն այս ընդունելութեան ներկայ պիտի ըլլար, բայց զինք բերող կառախումբը ձեան պատճառաւ չկրցաւ ժամանակին հասնիլ։

ՖՐԱՆՍԻՒԳԵՐՄԱՆԱԿԱՆ պատերազմին մէջ 1870ին Գերմանաց ձեռքը գերի ինկած ֆրանսացի զինուոր մը դեռ այս օրերս իւր երկիրը դարձաւ։ Այն ժամանակէն ի վեր մեռած կը կարծուէր, բայց ողջ էր, և գերի կը մնար միշտ, զի երկիցս փախչիլ փորձած ըլլալով, իբրեւ պատիժ երկարաձգուած էր իւր գերութեան տեւողութիւն, պատերազմին վերջանալէն ի վեր։ Խեղճ զինուորը դառնալով իւր հայրենի գաւառը, տեսաւ որ իւր կինն նորէն կարգուեր է, և զաւակներ ունեցեր է նոր ամուսնէն։

ՓԱՐԻԶԻ ՍԱՀԱՐԱՆԻՆ մէջ [illegible] տպաւորութիւն մը կը տիրէ միշտ։ Պանամայի գործերուն յառաջ բերած սրտայուզութենէն զատ, Երեսփ. Ժողովոյ մէկ որոշումը կայ որով կը զեղչէ խնայողական սնտուկներու կողմէ աւանդատու ժողովրդեան տրուած տոկոսին քանակութիւնն։ Այս տնօրէնութիւն ինքնին [illegible] չէ, զի տոկոսի սակն իջնելու վրայ է, և Պետութիւնը չէր կրնար պետական արժեթղթոց բերածէն աւելի տոկոս մը տալ ժողովրդեան։ Բայց հիմակ այս տոկոսի զեղչը շատ անպատեհ է կ'ըսուի, զի աւանդատուներուն վստահութիւնն ալ խախտած ըլլալով, թէ՛ շահն և թէ վստահութիւնը պակսելուն բնական հետեւանքն է որ շատեր իրենց դրամը քաշել սկսած են։ Արդ, եթէ խնայողական սնտուկներէն դրամ քաշելն ընդհանրանայ, Պետութիւնն ուրիշ կերպիւ չի կրնար վճարել բայց եթէ նոր արժեթուղթ հանելով, զի խնայողական սնտուկներու յանձնեալ գումարներ պետական արժեթղթի վերածուած են ամենքն ալ, և այսպիսի պարագայից մէջ ի հրապարակ նոր արժեթուղթ հանուելուն պէս պետական արժեթղթոց գինն աւելի կը կոտրի։

ՍԱՄՈՅԵՏԻ ԻՇԽԱՆ ՄԸ. — Փեթերսպուրկ քիչ մը վերստացած է իւր զըւարթութիւն, հակառակ սիպերեան ցուրտերուն, որք իւր հայրենիքն ձգեցուցած են Սամոյետի իշխան՝ Լաքոֆ Կէյմրուտա-Հուտինայի որդւոյն։ Ծայրագոյն հիւսիսի այս այցելուն մինչեւ քանիմեց տարեկան հասակը կռապաշտ էր, և մկրտուեցաւ Զարին կնքահայրութեամբ և Ալեքսանտրա Բետրովնա մեծ-դքսուհիին կնքամայրութեամբ։ Կայսրը ոսկեճամուկ հանդերձ մը նուիրեց իշխանին, որ յաջողեցաւ հրաման առնել օրթոտոքս եկեղեցիի մը շինութեան համար բեւեռային եզերքներու իւր գլխաւոր արօտատեղիներուն վրայ, Նարուկա գետակին եզերը (Օպիի մօտ)։

Կէյմրուտա-Հուտինա իշխանը (քրիստոնեայ անուամբ Բաւել Ալեքսանդրովիչ) սամոյերէն միայն կը խօսի. սակայն պտըտած է Ռուսիոյ մայրաքաղաքներուն մատենադարաններն ու հետաքրքրաշարժ վայրերն. այժմ խաղաղ հասած է և գարնան իւր երկիրը պիտի դառնայ, իւր հօտերն արածել տալու և որսորդութեամբ ու ձկնորսութեամբ զբաղելու համար։

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏՓՂԻՍԻ ԹԵՐԹԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

Բուխարայի էմիր Սէիդ-Աբդուլ-Ահադ խանը իւր որդու հետ Բաքուից Թիֆլիս ժամանեց արտակարգ գնացքով դեկտեմբերի 19ին։ Էմիրի հետ էին իւր բազմաթիւ հետեւորդները և Պետերբուրգից յատկապէս նորան ուղեկցելու համար ուղարկուած գեներալ Պուտեատան և ուրիշ շատերը։ Երկաթուղու կայարանը շքեղապէս զարդարուած էր կանաչով և դրօշակներով։ Կայարանում էմիրի գալուստը ողջունեցին փոխ-նահանգապետը, Թիֆլիսի բերդապահ գեներալ-լէյտենանտ Երինսը, քաղաքագլուխն և ոստիկանապետը։ Փոքր ինչ հանգիստ առնելով արքայական սենեակներում, էմիրը փոխ նահանգապետի հետ կառք նստեց և կազակների պահնորդ խմբի ուղեկցութեամբ գնաց նահանգապետի տուն, ուր նորա համար բնակարան է յատկացրած։ Այստեղ նորան այցելեցին կառավարչապետի կանցելիարեայի կառավարիչը և նահանգապետը։ Մի ժամից յետոյ էմիրն այցելութեան գնաց Պ. կառավարչապետին, ուր նորան ներկայացան բոլոր գեներալները։ Այնուհետեւ Պ. կառավարչապետը գեներալների հետ այցելութեան գնաց էմիրի մօտ։ Դեկտեմբերի 20ին էմիրն այցելեց 1ին կլասիքական գիմնազիոնը և Կովկասեան Թանգարանը։ Երեկոյեան բանկի Թատրոնում էմիրի պատուին ներկայացում կար։

—Կիրակի, դեկտեմբերի 20ի, Թիֆլիզի նահանգի ազնուականները դարձեալ մի ժո-

---

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (46)

Է. ՌԻՇԵՊՈՒՐ ԵՒ Է. ԼԻՊԷՆ

ՓԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԵՂԱՆԻՆ [illegible]

Ըսինք թէ ինչպէս Լուիզ Մոպէր յաջողած էր՝ ի շնորհս ճարպիկութեան՝ յարգալից հեռաւորութեան մը մէջ պահել Ռոսթան կոմսը և իր մէկ ժպիտը կամ իր բարեկամական մէկ բառը իր կողմէ ամենամեծ շնորհը նկատել տալ անոր։

Սակայն, Կասթոնին կիրքը, դժոխային ճարտարութեամբ մը սանձուելով մանկամարդ աղջկան կողմէ, օրէ օր կը սաստկանար։

Անոր ամեն մէկ խնդիրքներուն Լուիզ կը պատասխանէր.

—Համբերեցէք, պարոն կոմս. խոստումներս պիտի բռնեմ... բայց պէտք է որ ինքզինքս ձեզ արժանի կացուցանեմ։ Իմ վրաս գործաւորուհիի շատ հոգ կայ տակաւին։ Թողէք որ սորվիմ այն կենցաղին զոր ձեզ կը պարտիմ։

Կասթոն կը համբուրէր ձեռքը և կը մեկնէր գամ քան զգամ սիրատոչոր։

Յայտնի է թէ Լուիզ բոլորովին անտեղեակ էր պերճափառ կեանքի. հազարումէկ բաներ կ'անգիտանար։ Սակայն, իր խելացի կնոջ բնազդին շնորհքով, խոյս կուտար ոչ՛երէն՝ անսահման ճարպիկութեամբ կրնար յուսացուիլ թէ քիչ ատենէն կատարեալ պիտի ըլլար իր ստանձնած դերին մէջ։

Առտու մը, նրբատաշ արծաթեայ շքեղ տփիկին մէջ պարփակուած ընդունեց պայմանագիրն որով ինք տէր կ'ըլլար բնակարանին։ Հարիւր հազար ֆրանքի զանազան արժեթղթեր կը միանային այս իշխանական ընծային։

Կոմսն մեծապէս վստահացած էր մանկամարդ աղջկան երախտագիտութեան վրայ, և այդ օրը ներկայացաւ ապահովութեամբ մարդու մը որ կանխաւ յաղթած է ամեն ընդդիմութիւններու։

—Պա՛, կոմս, ըսաւ անոր Լուիզ, ճշմարիտ [illegible] մը պէս կը շռայլէք։ Իմիններս ապագան ապահովցուցիք. արդէն շատ էր այս... բայց դուք մտածեցիք իշխանական հարստութեան մը վրայ ալ։

—Ջանացայ հարուստ ընել ձեզ և նախանձելի կերպով երջանիկ։

—Շնորհակալ եմ, սակայն... գոհ չեմ։

Կասթոն անոր երեսը նայեցաւ զարմացումով։

—Ուրիշ բաներ ալ պէտք է ինձ, շարունակեց Լուիզ ժպտելով։

—Խօսեցէ՛ք... խնդրեցէք...

—Սիրելի՛ս, յարեց մանկամարդ աղջիկը, ուրիշ կիններու չեմ նմանիր ես. իմ անձնասիրութիւնս ունիմ ինչպէս դուք ձեր անձնասիրութիւնն ունիք։ Ուզեցիք տարփուհի ունենալ...

—Փարիզի ամենէն գեղեցիկ և ամենէն շնորհաշուք կինը։

—Օ՛հ, ամենէն գեղեցիկ...

—Այո, յարեց Կասթոն, և յաջողեցայ։

—Կը պնդեմ, շատ լաւ. բայց այս տարփուհին ոստուհի չուզեր։

—Կ'երդնում որ չունիք։

—Իսկ ինքնութեա՞ն։

—Ի՞նչ, գիտէ՞ք։

—Պէտք չէ՞ որ գիտնամ ձեզ հետաքրքրող ամեն բան, պատասխանեց Լուիզ անոր կարկառելով ձեռքն այն կատուային շնորհքով որուն գաղտնիքն ունին ամեն կիներ։

—Պաշտելի՛ էք, ըսաւ երիտասարդը։ Բայց եթէ լաւատեղեակ էք, գիտնալու էք նաեւ որ յարաբերութիւնս խզած եմ։

—Գոնէ... խզելու էիք։

—Հաւատացէք որ չեմ տեսած Էնրիէթան, ըսաւ Կասթոն հանդարտ ձայնով։

—Կարելի է, բայց երաշխաւորութիւններ կուզեմ։

—Ի՞նչ են ձեր հրամանները։

—Պիտի գրէք այդ կնոջ։

—Պիտի հնազանդիմ, սիրելի Լուիզ։

—Աղէկ գիտէք որ Լուիզ մեռած է, ըսաւ մանկամարդ աղջիկն աշխուժով. խնդրած էի որ ալ այդ անունը չտաք ինձ։

—Սակայն չեմ ուզեր միշտ տիկին տը Հօթֆոր կոչել ձեզ։

—Իրաւ է. Լաւ ուրեմն, ձեզ համար իմ անունս Սիզգա պիտի ըլլայ։

—Սիզգա՞...

—Ծաղիկի մը անունն է, Սիզգ, ոսկիէ խոտը, արեւին ծաղիկը։

—Եւ ինչո՞ւ այդ անունը։

—Վասնզի նախանձութեան խորհրդանշանն է։

Կասթոն այս խօսքէն գինովցաւ։

—Հիմակ, յարեց Լուիզ, գրեցէք։

—Նամակը տո՞ւն տալ կուզէք ինձ։

—Այո։

Պահ մը խորհելէն ետքը, Լուիզ հետեւեալը թելադրեց.

«Փեղուհիս,

«Ա՛լ չեմ սիրեր զձեզ։

«Մարդկային սիրոն ասանկ շինուած է. կը յոգնի և վերջապէս կը յափրանայ։ Երկու տարի եղաւ որ զիրար կը ճանչնանք։ Ա՛լ կը բաւէ...։ [illegible] որ մենէ մէկն [illegible]. չափազա՛նց եղաւ...։ Ազատութիւն տալով ձեզ, ես ալ ազատ կ'ըլլամ։ Ինծ պէս ըրէք, ուրիշ տեղ սէր փնտռեցէք։»

—Ուրիշ տեղ սէր փնտռեցէք, կրկնեց Կասթոն։ Ա՞յս է ամենը։

—Ոչ։ Անկեղծօրէն ըսէք ինձ, անկէ լաւագո՞յն եմ։

—Հարիւր անգամ լաւագոյն։

—Լաւ ուրեմն, ըսէք իրեն ատիկա։

—Կնամեծարութեան դէմ է։ Այդ կինն իմ մահացու թշնամիս պիտի ընեմ։

—Կը կարծէք թէ պիտի սիրէ՞ք զիս։

—Շիտակն հոգս չէ, յարեց Կասթոն։ Առէք, ահաւասիկ իմ պատասխանս։

Եւ մանկամարդ աղջկան նայուածքներէն ու խօսքերէն արբշիռ, սա վերջին խօսքերը գրեց.

«Ձեզ բռնած ատենս ըսի թէ տարփուհի կուզէի ունենալ Փարիզի է՛ն գեղեցիկ կինը։ Մ' հարցուցէք ինձ թէ ինչո՞ւ կը թողում զձեզ։» «ԿԱՍԹՈՆ ՏԸ ՌՈՍԹԱՆ»

—Կատարեալ եղաւ, ըսաւ մանկամարդ աղջիկը նորէն կարդալով այս յախուռն տողը։ Հիմակ, կնքեցէք և հասցէն գրեցէք։

Կասթոն հնազանդեցաւ։ Մանկամարդ աղջիկն առաւ նամակն ըսելով.

—Յանձն կառնեմ որոշեալ ժամուն իր տեղն հասցնել։

—Ըսէք, Սիզգա, յարեց կոմսը, զձեզ Օբերա տանելու շնորհը չէ՞ք ըներ ինձ։

—Ե՞րբ։

—Ուրբաթ։ Ճիշդ օրն է։ Առաջին անգամ պիտի երթանք ձեր օթեակը, որուն տարեկան կտրոնն աւասիկ։

—Լաւ, պարոն կոմս։

—Խնդրեմ Կասթոն կոչեցէք զիս։

Մանկամարդ աղջիկը ճիգ մը ըրաւ կարծես։

—Այսպէս, Կասթոն, յարեց Լուիզ, յառաջիկայ ուրբա՞թ պիտի ներկայանամ Փարիզեան ընկերութեան։

—Խօսք կուտամ որ մեծ յաջողում պիտի պատճառէ։

—Նորէն իմ տունս պիտի բերէք զիս։ Ճաշի կը հրաւիրեմ ձեզ։

Ընտանեկան շեշտն զոր առած էր խօսակցութիւնը, մանկամարդ աղջկան սիրուն շնորհքն կարծես կ'ըսէին Կասթոնին թէ ամեն բանի համարձակելու ժամն հասած էր։

Բռնեց երկու ձեռները պաշտելի արարածին որ կը դիւթէր զինքը, սրտին վրայ քաշեց զայն։

Այս հպումէն մանկամարդ աղջիկը սարսռաց իբր թէ կարմրած երկաթ մը դպած ըլլար իրեն։ Անդին հրեց զայն սաստկութեամբ և ակնարկովը շանթահարեց։

Կասթոն ափիբերան մնաց։

Կացութիւնը դժնդակ էր. բայց այս վճռական վայրկենին, մանկամարդ աղջկան շահը կը պահանջէր որ յաղթանակէր։

Կասթոն իր բոլոր խոստումները կատարած էր, մինչեւ իսկ անդին ալ անցած էր. պէտք էր որ Լուիզ անպատճառ իր այս նոր ընդդիմութիւնն արդարացնէր յաչս երիտասարդին՝ բացատրելով իր վարմունքին պատճառը։

—Պարոն կոմս, ըսաւ իր նայուածքին տալով փայփայուն արտայայտութիւն մը, կարծեմ թէ զիրար չենք հասկցած։

—Բայց...

—Թողէք որ խօսքս լմնցունեմ։ Իրապէս կը սիրէ՞ք զիս։

—Կարծեմ ապացոյցը տուի բաւականին։ Ըրածներէս ետքը...

—Դրամական զոհողութիւննե՞ր, ըսաւ մանկամարդ աղջիկն արհամարհոտ կերպով. պզտիկ բան ձեզ համար։ Քանի մը հարիւր հազար ֆրանքն ի՞նչ նշանակութիւն ունի Ռոսթան կոմսին համար։ Ինծ համար քիչ բան մը, ձեզ համար ոչի՛նչ։

—Սակայն...

—Թողէք որ լմնցունեմ, բարեկամս, յարեց Լուիզ մեղամաղձիկ ժպիտ մը դնելով ձայնին մէջ։ Ըսէ տեսնեմ, պարզապէս գնե՞լ ուզեցիք զիս։

—Ոչ...

—Շարունակեցէք։

—Ձեզ նման կին մը, Սիզգա, չի գնուիր, ինքզինքն արժանի կը կացուցանէ։

(Շարունակելի)

գով ունեցան Կախեթում երկաթուղի անցկացնելու համար մի քանի խնդիրներ քննելու։ Այդ ժողովում յարմար գտնուեց երկաթուղին անցկացնել վաճառականական հիմունքներով, յետոյ որոշուեցաւ գործը չտապեցնելու համար օգնել երկաթուղու համար յարմար ճանապարհներ գտնիլը, առանց սպասելու այն բանին՝ թէ արքունի գանձարա՞նը պիտի շինի երկաթուղին, թէ մասնաւոր անձեր. որոշուեցաւ նոյնպէս, որ երկաթուղու շինութիւնն ագնուականներն իրենց վրայ առնեն և այս մասին խնդրամատոյց լինին կառավարութեանը։ Վերջը ժողովը մի յանձնաժողով ընտրեց, որ պիտի քննի երկաթուղին շինելու համար անհրաժեշտ գումարները ձեռք բերելու միջոցները։

—Երէկ, դեկտեմբերի 21 ին, Թիֆլիսի արքունական թատրոնում նշանակուած ներկայացումը յետաձգուեց, որովհետեւ այդ գիշեր ռուսերէն ներկայացում էր ի պատիւ Բուխարայի էմիրի։

⁂

Բագուից դեկտեմբերի 16 ին Շամախու թեմի առաջնորդ Գեր. Մեսրոպ արքեպիսկոպոսը տեղս ժամանեց։

Լսում ենք, կ'ըսէ Նոր Դար, որ նորոգ հանգուցեալ Աղաբաբա Հալայեանի կտակատարները Շամախու թեմական դպրոցի (և ո՛չ հին եկեղեցու նորոգութեան) օգտին պիտի թողնեն հանգուցեալի կտակած 7,000 րուբլին։ Նոյնպէս լսում ենք, որ ամուրի հանգուցեալի թողած շատ տասնեակ հազար րուբլիներով պիտի ապահովուի Շամախու երբեմն թեմական, բայց այժմ տարրական դպրոցը։ Եթէ մեր լսածը ճիշտ է, այն ժամանակ հանգուցեալի փողովը Շամախու թեմական դպրոցը նորից կը վերականգնի և յաւիտեան ապահովուած կը մնայ։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նոր Տարւոյ առթիւ շնորհաւորական Նամակ մը ուղղած է Ս. Էջմիածնայ Տեղակալ Ամեն. Երեմիա Սրբազանին, զրկելով նաեւ Ազգ. Հիւանդանոցի ոսկեզօծ Օրացոյցներէն։

Արմաշու փոխ-վանահայր Գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան երէկ իրիկուն մայրաքաղաքս հասաւ, ըստ հրաւէրի Բերայի Թաղ. խորհրդոյն և հրամանաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Ս. Ծննդեան տօներուն Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին հոգեւոր պաշտօն վարելու համար։

Երէկ Սկիւտարի մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութեան տխուր հանդէս մը։ Մեռեալն էր հին վաստակաւոր վարժապետ մը, պատուելի Թէոդորոս Զօրայեան, որ իր 92 տարիներն անցուցած է ազգային մանկտիները դաստիարակելով անընդհատ։ Վերջերս Պէրպէրեան վարժարանին մէջ գիշերային հսկողութեան պաշտօնը կը վարէր։ Նոյն վարժարանին սաներն ու վաղեմի վարժապետին բազմաթիւ համակրողները հետեւեցան դագաղին։

Մայր Եկեղեցւոյ Թաղական խորհրդոյ անդամներէն երեքը պակաս ըլլալով, խորհրդոյն խնդրանօք և Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ՝ անոնց տեղ նշանակուեցան Խաչիկ էֆ. Ազգալեան, Մկրտիչ էֆ. Նըպըրըզճեան և Պաղտասար էֆ. Յակոբեան։

Տիկին Մատաթեանցի կիրակնօրեայ լսարանին դասախօսութեանց մինչեւ ցարդ արձանագրուող վարժուհիներու թիւն է 14։ Ասոնցմէ ոչ ոք կրցած էր սակայն Բերա գալ երէկ, ձիւնոտ օդին պատճառաւ որ հաղորդակցութիւններն այնքան դժուարացուցած է և հանրակառաց երթեւեկութիւնը դադրեցուցած։ Հետեւաբար յառաջիկայ կիրակիին կը մնայ մանկավարժական լսարանին բացումը։

Յառաջիկայ Ս. Ծննդեան առաջին օրն, Արժ. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան հանդերձեալ լինելով հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանել ի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Թաղիս, կը փութամք ծանուցանել ի գիտութիւն համայն եկեղեցասէր ազգայնոց։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Գում-Գաբուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյ
Ատենապետ Ատենադպիր
Գ. Յ. ԱՃԱՌԵԱՆ Ս. ՖՐԸՆԿԵԱՆ
406 1—1

Խասգիւղի Աղքատաց Խնամակալութիւնն ի լրանալ իւր պաշտօնավարութեան, պարտք կը համարի ներկայիւս յայտնել թէ Մեծ. Տօքթ. Յարութիւն էֆ. Բաչաեան բարեհաճած էր միշտ անձնուիրաբար դարմանել Խնամակալութեանս կողմանէ իրեն ներկայացեալ գիւղիս կարօտեալ հիւանդներն, որպէս և դեղագործ Մեծ. Սարաֆեան Նշանք հինգ ամիսներ յօժարափոյթ ստանձնած էին ձրիաբար մատակարարել նոյն հիւանդաց դեղերը։

Խնամակալութիւնս կը փութայ ուրեմն որպէս և առանձինն նոյն և հրապարակաւ յայտնել իւր ջերմագին շնորհակալիքն յիշեալ Մեծ. Տեարց, որք սփոփելով գիւղիս աղքատ հարիւրաւոր հիւանդներն, օժանդակ հանդիսացած են միշտ Խնամակալութեանս։

Ի դիմաց Աղքատաց Խնամակալութեան
Վ. Ատենապետ Ատենադպիր
Յ. Գ. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ Հ. ԻՓԷՔՃԵԱՆ
31 դեկտ. 92։ Խասգիւղ

Պարսից լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.—Առաջին կարգի Մեճիտիյէ պատուանշան տրուեցաւ պարսկական կառավարութեան պաշտօնեայներէն Միւշիր Էլ Միւլք Միրզա Նասրուլլահ խանի և Բարձր. Վէքիլ Էլ Միւլքի առաջին քարտուղար Միրզա Ֆեյզուլլահ խանի։

Երկրորդ կարգի Օսմանիյէ՝ Միֆթահ Էլ Միւլք Միրզա Մահմուտ խանի և մայրաքաղաքիս պարսկական դեսպանատան առաջին թարգման Յովհաննէս խանի։

Երկրորդ կարգի Մեճիտիյէ՝ Պարսկաստանի արտաքին գործոց նախարարութեան գլխաւորապետ Հաճի Միրզա Հասան խանի և Ատրպատականի Նահանգին թղթակցութեանց ընդհանուր տնօրէն Տէպիր-Իւս-Սուլթանա Միրզա Նասրուլլահ խանի։

Երրորդ կարգի Մեճիտիյէ՝ Պարսկաստանի արտաքին գործոց նախարարութեան Մէքթուպճի Ադա Միրզա Էսճատուլլահի և նոյն նախարարութեան արտաքին թղթակցութեանց քարտուղար Միրզա Ղուլամ Հիւսէյին խանի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ Ճիտտէի պարսկական ընդհանուր հիւպատոս Հաճի Միրզա Հաշիմ խանի։

Չորրորդ կարգի Մեճիտիյէ՝ Սպանիայի Տօքթ. Ֆէտրիքօնինի և արուեստական չքադրամ՝ նորա կնոջ։

ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ առաջին իմամ Հաֆըզ Եուսուֆ էֆէնտի մեռաւ և կայս. Իրատէով անոր յաջորդեց երկրորդ իմամ Բաշիա էֆէնտի։

ՆԱԽԱՐԱՐԱՑ Խորհուրդն իւր երէկի նստին մէջ մինչեւ իրիկուան ժամ մէկ զբաղեցաւ կարեւոր խնդիրներով և իւր խորհրդակցութեանց արդիւնքը տեղեկագրով մը մատոյց Վեհ. Սուլթանին։

ՀՆՏԱԽՏ.—Ի Տրապիզոն և ի Բլաթանա յունուար մէկի երեկոյէն մինչեւ 2, հնտախտի ո և է դէպք չէ պատահած։ Վանայ նահանգին ու շրջակայից մէջ եւս հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

ԾՈՑՆ ԲԱՐԵՐԱՐՔ.— Պ. Տէժէգրիուս Սմէֆռանովիչ 600 ոսկի զրկեր է Ֆէների Պատրիարքարանին։ Այս գումար տարեգլխոյ առթիւ պիտի բաշխուի Պատրիարքարանի պաշտօնէից, մայր վարժարանին, Պալըգլը հիւանդանոցին և Բերայի ու Գըլըթիւլի յոյն աղջկանց վարժարաններուն։

—Աղեքսանդրիոյ յոյն սեղանաւորներէն Սըր Ճօն Անթօնիատէս, որ մայրաքաղաքս կը գտնուէր, մեկնելէ առաջ 50 ոսկի նուիրեր է Ֆէների Պատրիարքարանին։

ՀԱՆՐԱՅԻՆ Պարտուց Վարչութեան համար, ինչպէս կը լսուի, Պոլսոյ Ճաղալ Օղլու թաղին մէջ 2300 մետր տարածութեամբ գետնի մը վրայ նոր շէնք մը պիտի կառուցուի։ Բարձր. Մեծ-Եպարքոսն հրամայած է Ներքին գործոց Նախարարութեան՝ յանձնաժողով մը կազմել շինութեան գործին վրայ հսկելու համար։ Ներքին գործոց Նախարարութիւնն ալ այդ պաշտօնը յանձնած է Համագգային Անկելանոցին համար կազմեալ յանձնաժողովին, որուն անդամներէն գնդապետ Իզզէթ պէյ անցեալ օր նոյն գետնոյն վրայ քննութիւններ կատարած է։

ՄԱԼԻԵՅԻ պաշտօնատան մէջ կազմեալ յանձնաժողովը, որ պաշտօն ունէր քննել Րէժիի վարչութեան և ծխախոտ մշակողներու միջեւ եղած անհամաձայնութիւնը, իւր խորհրդակցութիւններն աւարտելով տեղեկագիր մը պատրաստած և մատուցած է Բ. Դրան։

ՄԻՍ ԵՒ ԱԾՈՒԽ.— Քաղաքապետ Վսեմ. Րըզամ փաշա նկատելով որ այս օրերս մսի գինը բարձրացած է և իրաց այդ վիճակն արդիւնք է շահախնդիր անձանց ոմանց շահադիտութեան, հրամայած է թաղապետական բոլոր շրջանակաց որ հարկ եղած միջոցները ձեռք առնուելով տեղի չտրուի այդ կարգի ապօրէն նպատակներու իրագործման։

Քաղաքապետութեան և Ոստիկանութեան Նախարարութեան միջեւ կատարուած բանակցութեամբ որոշուած է պահել նախապէս տրուած այն որոշումն, որով ածուխին իւրաքանչիւր հարիւր հին օխան քառասուն և հինգ ղրուշէն աւելի չպիտի վաճառուի։ Այս որոշման գործադրութեանը համար յատուկ պաշտօնեայք կարգուած են։

ՍԵԲԱՍՏԻՈՅ Նորընտիր կուսակալ Խալիլ պէյ իւր պաշտօնատեղին ժամանելուն արժանավայել պատիւներով ընդունուեր է տեղւոյն կրօնական քաղաքային ու զինուորական պաշտօնէից, հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերուն ու երեւելեաց և օտար տէրութեանց հիւպատոսներուն ինչպէս նաեւ Գարաբաքք Աշիրէթէն կազմեալ Համիտիյէ հեծելագնդին կողմէ։ Խալիլ պէյի ժամանման չորրորդ օրը հանդիսաւոր կերպիւ տեղի ունեցեր է Ն. Վսեմութեան պաշտօնը վաւերացընող կայս. Ֆերմանի ընթերցումը։ Խալիլ պէյ պարագային յարմար բանախօսութիւն մը ընելով բարեմաղթութիւններ ըրեր է վասն կենաց Վեհ. Սուլթանին։

ՍԵՂԱՆԱՒՈՐՔ.— Ձեռնհաս իշխանութիւնը պատրաստած է սեղանաւորութիւն ընող անձանց մէկ ցուցակն, որով յետ այսօրիկ եթէ տեսնուին այն կարգի անձինք, որք սեղանաւորութիւն կ'ընեն և որոց անունն այդ ցուցակին մէջ չգտնուիր, օրինաց տրամադրութեան պիտի ենթարկուին։

ՆԵՐՔԻՆ գործոց Նախարարութիւնը Պետական Խորհրդոյ որոշմամբ գրած է ամեն կողմ՝ թէ հայրը մեռած տղու մը մայրն երբ օրինական պայմանաժամուն մէջ իւր տղուն անունը մարդահամարի տումարաց մէջ արձանագրել չտայ, պէտք չէ այդ մայրերու նկատմամբ ո և է պատիժ ի գործ դնել։

ՄՈՒՍՈՒԼԷՆ կը հեռագրեն թէ վերջին օրերս տեղացած յորդահոս անձրեւներուն պատճառաւ՝ Տիգրիս գետը յորդեր է եւ ջուրերը բարձրացեր են 4½ կանգունի չափ ու կը շարունակեն բարձրանալ։

ՄԱՀ.— Բ. Դրան կայս. Ատեանի դիւանատան քարտուղարներէն Վահիտ պէյ անցեալ հինգշաբթի օր մեռաւ։

Պետական Խորհրդոյ դիւանապետ Շէֆիք պէյ, որդի Բ. Դրան արարողապետ Ֆէրուխ պէյի, նախընթաց գիշեր մեռաւ։

ԲԱՆՏԱՐԿԵԼՈՑ լուսանկարներն առնելու գործն յանձնուած է ոստիկան Շէմսի էֆէնտիի, որուն օգնական մը եւս տրուած է։

ԿԱՐԻՆԷՆ կը գրեն առ «Սաբահ» թէ կուսակալութիւնը տեղեկանալով որ Բասէն գաւառակի Գարաքաղուի կողմը Սիվտանլը ու Պերազի աշիրէթներու միջեւ տիրած ցրտութեան պատճառաւ հարսնիքի մը պահուն իրարու հետ կռուած են և կռւոյ հետեւանքը կը շարունակէ, սպայ մը և ոստիկան-զինուորք զրկուած են անդ՝ քննութիւններ կատարելու, հարկ եղածն ի գործ դնելու և անհաճոյ դէպքերու տեղի չտալու համար։

ԾՈՎԱՅԻՆ ԱՐԿԱԾ.—Մախսուսէի «Պէնկազի» շոգենաւն, որ հինգշաբթի իրիկուն նոյն վարչութեան «Լութֆիյէ» շոգենաւին զարնուած էր, Մուտանիայէ առջեւ շոգիի խողովակը պայթեր է և առաջին մեքենավարն ու հնոցպանները հոն վիրաւորուեր են։ Շոգենաւը ճամբան չկրնալով շարունակել, ուղեւորք սկսեր են աղաղակել։ Նոյն պահուն Մուտանիայէն եկող հելլենական առագաստանաւ մը «Պէնկազի»ն ետին կապելով մինչեւ Խայըրսըզ Ատա բերեր է։ Հոն «Պէնկազի»ի երկրորդ մեքենավարը յայտարարեր է թէ կրնայ մինչեւ Նաւահանգիստ տանիլ։ «Պէնկազի» այդ վիճակին մէջ գտնուելով բաղխումը տեղի ունեցեր է, որովհետեւ կաթսան աւրուած ըլլալով մեքենան չէր կրնար ետեւ կամ առաջ շարժիլ և ատկից զատ այդ կողմն ալ բուռն հոսանք մը կար։ «Լութֆիյէ»ի նաւապետ Ճիվանի և «Պէնկազի»ի նաւապետը դեր-հազարապետ Ալի էֆէնտի ծովային ատեանին կողմէ հարցաքննութեան ենթարկուած են։ «Լութֆիյէ» շոգենաւն հանելու համար հարկ եղած աշխատութիւնք սկսած են։

ՀՐԴԵՀ.—Երէկ գիշեր ժամ 2ին ի Մաքրիգիւղ Սագըզ Աղաճ թաղը Լատինաց եկեղեցւոյ փողոցին մէջ քարուկիր տունէ մը հրդեհ ծագելով այդ տունը այրեցաւ։

—Նոյնպէս երէկ գիշեր Պոլսոյ Սիւլէյմանիյէ թաղին մէջ ապարանքի մը խոհանոցէն հրդեհ ծագելով խոհանոցն այրեցաւ։

ԹԷՅ.—Ատանայի, Սուրիոյ ու Հալէպի նահանգաց մէջ թէյի մշակութեան սկսուած է։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ.—Դեկտեմբեր 26էն մինչեւ յունվար 1, մայրաքաղաքիս ու շրջակայից մէջ 261 մահեր պատահած են, 129 այր և 132 կին, ասոնց 161ն՝ իսլամ (69 այր ու 92 կին), 90ը՝ քրիստոնեայ (53 այր ու 37 կին) և 10ը՝ հրեայ (7 այր և 3 կին)։

ՍԷԼԱՆԻԿԷՆ կը գրեն թէ ինֆլուէնցան ճարակած է, սակայն շատ թեթեւ կերպիւ։ Փողացան եւս օր օրի նուազելու վրայ է։

Ի ՉԱՄԼԸՃԱ օթէլ մը կառուցանելու համար Պ. Նակէլմաքէրս ուզած է գնել ի Սարը Գայա վախճանեալ Թուֆիսլը Մահմուտ փաշայի սեպհական շէնք մը, սակայն չէ կրցած յաջողիլ այդ շէնքի տէրերուն հետ։ Կ'ըսուի թէ Պ. Նակէլմաքէրս եթէ իւր խորհուրդն իրագործելու համար ընկերութիւն մը կազմէ, մենաշնորհ պիտի խնդրէ Սկիւտարէն ի Չամլըճա շոգեչարժ թրամուէյ մը հաստատելու համար։

ՄԷԿ ՄԻԼԻՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ.—Աթէնքի պաշտօնական լրագիրն հրատարակած է արքայական հրամանագիրը որուն համեմատ պաշտօնանկ կըլլայ Պ. Վէռէնիքի, մայրաքաղաքիս հելլենական հիւպատոսարանի երկրորդ թարգմանն, «իբր հանրային պաշտօնեայ՝ իր անձանց վարմունքին համար»։ Սելանիկի հիւպատոսարանին քարտուղար Պ. Մեծօբուլօս կը յաջորդէ Պ. Վէռէնիքին։ Այս վերջնոյն եւ Օր. Եօրկիատէսի միպային ամուսնութեան լուծումը հրամայող վճռագիրն ի մօտոյ պիտի քննուի Աթէնքի վերաքննիչ ատենին կողմէ։ Երկու կողմէ առաջնակարգ փաստաբաններ կարգուած են։ Սպասելով վճռոյն, Պ. Վէռէնիքի ընդարձակ յիշատակագիր մը մատուցած է Յունաստանի արտաքին գործոց նախարարին, ի պատասխանի Օր. Եօրկիատէսի խնամակալ Պ. Սէվաստօբուլօսի իրեն նկատմամբ ըրած անարգանքներուն և զրպարտութիւններուն։ Այս գրութիւն հրատարակուած է Աթէնքի «Ասթի» լրագրոյն մէջ, ուր կը գրաւէ 7 սիւնակ։

ՔԱՐՓՈՒԹԷՆ կը գրեն թէ բամպակի բերքն, որ մէկ քանի տարիներէ ի վեր աղէկ վիճակի մէջ չէր, այս տարի լաւ վիճակի մէջ է, գինը բարձրացած են և բաւական քանակութեամբ յԵւրոպա կը ղրկուի։

ԲԵՐԱՅԻ ոստիկաններէն Ալի Րիզա էֆէնտի, կ'ըսէ «Թարիգ», ծրագիր մը մատուցած էր Ոստիկանութեան Նախարարութեան՝ թէ Բերայի ոստիկանութեան հաշուակալութեան և հասոյթից գանձման պաշտօնեայք ոմանք գեղծումներ գործած են։ Ոստիկանութեան Նախարարութեան կողմէ կարգեալ յանձնաժողով մը քննելով այդ պաշտօնէից հաշիւները հաստատած է թէ վերոյիշեալ Ալի Րիզա էֆէնտի իր պաշտօնէն դուրս ըլլալով սեղանաւորութիւն ըրած, ամաթոշակ գեղչողներու անձնական կնիքը գրաւած և այլ անպատշաճ ընթացից մէջ գտնուած է և թէ նոյն պաշտօնէից դէմ ըրած բողոքներն ալ թշնամութեան արդիւնք են, հետեւաբար այդ խնդրոյ վերաբերեալ գրութիւնք յանձնուած են Դատական նախարարութեան և Ալի Րիզա էֆէնտի պաշտօնանկ ըլլալով իրեն տեղ ուրիշ մը կարգուած է։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՄԷԼԻԱ վաճառատունը կը հաղորդէ մեզ թէ իր կազմակերպած վիճակահանութիւնը տեղի ունեցեր է երէկ և շահեր է ՀԻՆԳ թիւը, որ կը ստանայ արդուզարդի նուագարանաւոր տուփ մը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆԷ ՏԱՃԿԵՐԷՆ
Գին 12 ղրուշ

Արիկեան Մեծ Միհրան էֆէնտի որ իւր ի վաղուց անտի օսմանեան լեզուի մատուցած գնահատելի ծառայութեամբը քանիցս Վեհ. Սուլթանի պէս պէս շնորհացը արժանացած է, այս անգամ եւս ամենակարեւոր յաւելուած մը ըրած է իւր արդէն յօրինած 45 տեսակ դասագրքեանցը վրայ, մեծաւ խնամօք յօրինելով սոյն ընտիր բառգիրքն որոյ ամենամեծ պէտքը կը զգացուէր 700 տարիներէ հետէ։

Կը ծախուի ամեն գրավաճառի քով, կեդրոնատեղին է Պոլիս Մէրճա Չարշը Դումլու խան Թիւ 8. Թղթադրոշմի փոխարէն գաւառներն ա կը ղրկուի։ 321 4—4

ՀԵՌԱԳԻՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՓԱՐԻԶ, 13 Յունուար. — Բանամայի դատաստանին այս օրուան ունկնդրութեան մէջ, հաշուեկշռարար Պ. Մոնշիքուռ խստիւ պախարակեց Պ. տը Լէսէբսի (հայր) ընթացքը։

14.—Բանամայի դատին մէջ, Պ. Հիւկօ Օպէրտէօֆէր յայտարարեց թէ 3,600,000 ֆր. ընդունած է իբրեւ անդամ սեղանաւորական խմբակին և իբրեւ հեղինակ պարգեւաւոր փոխառութեան ծրագրին։ Պ. Շարլ տը Լէսէբս յայտնեց թէ 50,000 ֆր. տուած է Կօլուայի տնօրէն Պ. Արթիւր Մէյէրի։ Վկայից ունկնդրութիւնը վերջացաւ։

— Խորհրդարանական յանձնաժողովոյ վերջին նստին մէջ, առեւտրական նախորդ նախարար Պ. Ժիւլ Ռօշի անմեղութիւնն հաստատուեր է։ Պ. Պայհօ խոստովաներ է թէ Բանամայի ընկերութենէն մէկ միլիոն ֆր. խնդրեց, և 375,000ն ստացաւ (ինչպէս արդէն յայտարարած էր Պ. Շարլ տը Լէսէբս)։ Նոր ձերբակալութիւնք, նոր խուզարկութիւնք պիտի ըլլան։

—Հարցաքննիչ դատաւորը Պառոն տը Ռէյնաքի նախկին ընկեր Բրոբէ սեղանաւորին քովէն գտաւ ուրիշ կարեւոր թուղթեր, ընդ որս (դրամ ընդունող և բաշխող) Առթոնի հետ փոխանակեալ նամակներն և Առթոնի պատկանող չէքերու տետրակ մը։

—Երեսփ. Ժողովոյ մէջ, Պ. Հիւպառ պահանջեց որ ընդհանուր ընտրութիւնք փութացուին։ Պ. Րիպօ պատասխանեց թէ Հանրապետականք վստահութեամբ կրնան ներկայանալ ընտրողաց առջեւ, բայց առայժմ կարելի չէ որոշել ընդհանուր ընտրութեանց թուականն, և թէ ժամանակ պէտք է տալ դատական իշխանութեան իւր կարեւոր գործերն աւարտելու։ Պարզ օրակարգ քուէարկեցաւ 123 ձայնից մեծամասնութեամբ։

—Պ. Քառնօ ստորագրեց հրամանագիր մը, որով Պանք տը Ֆռանս կ'արտօնուի մինչեւ չորս միլիառի բարձրացնելու իւր պանքատոմսերը։

ՊԵՐԼԻՆ.—Կայսրը Պերլին դարձաւ, և անմիջապէս երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Պ. Քաբրիվիի հետ։

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 4 Յունուար

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ	110 %
3 » Փարիզի	22 76

ՕՍՄԱՆԵԱՆ ՓՈՆՏՍԼԸՍԷ

Երէկ երեկոյ գոց. (Միւզ. Դ. Սէրի)	23 14
Բերայի մէջ	23 14
Առաւօտուն բացուեցաւ	23 15
Կէս օրին	23 15
Թահվիլաթը Օսմանիյէ երէկ երեկոյ	Փորձ չ'կայ
» » ժամ 5ին	81 05

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Սէրի	55 ½
»	»	32
»	»	24 15

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	5 10
Քրէտի Ժէնէրալ	» »	8 06
Պանք տը Բօնս.	» »	5 08
Սօս. Շանժ է վալէօր.	» »	4 26
Րէժի	» »	15 32
Թրամուէյ	» »	635
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	87 50
Բաժնեթուղթ Լաւրիօմի		78

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 38
Անգլիական ոսկի	»	110 21
Մարք Գերմանական ոսկի	»	107 25
Իմբէրիալ	»	90
Քրիմից	»	51 20
Րուպլ թղթադրամ	»	9 07
Մեճ. արծաթ (տարբ.)	»	107 36
Մանր արծաթ	»	103 20
Մէթալիք	»	96
Թասֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՊԵՐԼԻՆ, 14

Օսմանեան Երկաթուղի	88 90
Օսմ. Րէժի	— —
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 285
» Փարիզի	80 75

ՎԻԵՆՆԱ, 14

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	— —
Փարիզի	48 75
Օսմանեան Րէժիի բաժնեթուղթ	— —
» Երկաթուղի	— —

ՁՈՒԻՑԵՐԻՈՅ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ՍԷՆ-ԺԷՐՎԷԻ ԱՐԿԱԾՆ

Արկածի լուրեր կը հասնէին մեր այս ամառ մօտէն ու հեռուէն տարօրինակ արագութեամբ ու զուգադիպութեամբ։ Քանի մը ժամուան մէջ հրոյ ճարակ կըլլար ամբողջ սիրուն գիւղ մը, զոր միայն լեռ մը կը բաժնէր մեզմէ։ Բազմաթիւ անցորդներ կը խանձէին, կ'այրէին չարաչար՝ գեղեցիկ շոգենաւի մը մէջ, որոյ կաթսայն պայթած էր Լօզանի առջեւ այս չքնաղ Լէմանի վրայ, որոյ հրապոյրները կը վայելեմք մեք ի բարձանց շատ օրեր։ Յանդուգն ճամբորդներ գահավէժ՝ ի գլորած հանդիպակաց լերան մը վրայ ջախջախուած էին ահաւոր կերպիւ։ Երկու կառախումբք իրարու բաղխած էին մթին փապուղւոյ մը մէջ, ուստի քանի մը ժամեր առաջ միայն մեկնած էինք մենք. թշուառ զոհեր կը թողուն յօշատուած՝ իրենց ճամբուն վրայ։ Գերմանացի պառաւ կին մը կար մեր անդօկին մէջ ի ժիւռա. բարեսիրտ, հեզահամբոյր կին մը, որոյ այտերն այդ հասակին մէջ իսկ պահած էին մատաղ տիոյ վարդի գոյները։ Նա ալ ամեն առաւօտ դողդոջուն ձեռքերով կը բանար նոր թերթերն հեռագիրները կարդալու։ Իւր սիրական զաւակն ու հարսն տեղաւորած էին Համպուրկ մնայ, երբ իւր կոտորածները կը կատարէր հոն անողոք քօլէրան։

Բայց ոչ մին թերեւս այնքան անակնկալ էր, ո՛չ մին անշուշտ այնքան սրտաճմլիկ որքան Սէն Ժէրվէի արկածն։

Սէն Ժէրվէ փոքրիկ գիւղ մ'է Վերին-Սավուայի մէջ, Ժընեւէն հազիւ քանի մը ժամ հեռու, Շամօնիի ճամբուն վրայ, Առվի հովտին մէջ։ Հազիւ երկու շաբաթ անցած էր արդէն արկածէն վերջ, երբ մեք կ'երթայինք տեսնել այս վայրն, որ դեռ նոր թատրոն եղած էր այնքան աղեկտուր տեսարան մը։

Առաւօտուն կանուխ ճամբայ կ'ելնեմք Ժընեւէն շոգեկառքով։ Մեր ուղեկցաց մեծագոյն մասն, ամեն ազգէ ու լեզուէ երկսեռ բազմութիւն մը, Շամօնի կ'երթան, իրենց մեծարանքները մատուցանելու առ Մօն-Պլան։

Ֆրանսական հողի մէջ ենք արդէն քանի մը վայրկեանէ վերջ։ Շոգեկառքն հեւ ի հեւ կը խորասուզի հովտին մէջ բլուրներու վրայ, նեղ աքերու վրայ, սեպ ժայռերու կողերէն ու վայր։ Տղմուտ Առվը, որ Շամօնիի սառնարաններէն կ'առնու իր ծնունդն, կ'շտապէ Րօնի կապուտակ ջրոյ մէջ տանիլ թափել իւր շառաջաձայն յորձանուտ հոսանքներն։

Ի տես կուգան անշուք տներ ապառաժի մը հովանոյն տակ ապաստանած։ Ջրվէժներ կը գտնենք քայքայուած, փոշիացած, ծածկուած շամանթարի անհամար թափցիկ ամպերով, որ կը նորոգուին ամեն վայրկեան, և արեգական եռօններով գոյնզգոյն կը ցոլան մերթ։ Սապարար դաշտն, Ալպեանց ձիւնազարդ կատարներն կը սփռուին շուրջանակի։ Հետզհետէ կ'անհետանան Ժիւռայի տարածախիտ ծիծաղկոտ կոյերն և Սալէ լերկ սրբածայր սարերն, ու հեռուէն յանդիման մանուածապատ հովին լերին մերձաւոր գագաթներէն ի տես կուգան Մօն-Պլանի շղթին ձիւնածածուկ յաղթական գլուխներն, յորոց ոմանք թխամրայր ամբոյ ճեղքելով երկնից դէմ կը ցցուին սաւոտ։

Շոգեկառքի վերջին կայարանն հասած ենք։ Հանրակառքով պիտի շարունակեմք մեր ճամբան Մեծ ու անհամբեր ոգեւորութիւն կը տիրանայ ամենուն։ Ո՞վ պիտի յաջողի գտնել լաւագոյն նստարաններն, ուսկից ընդլի պիտի լինի մեր հայեացքն յոլ շուրջանակի նորանոր հրապուրիչ տեսարանաց վրայ։

Թիկնեղ անձ մ'է պաշտօնեայն որ կը հսկէ հոս։ Իւր փայլուն համազգեստով, պարթեւ հասակով, հնչուն ձայնով սովորական մահկանացուէ մը տարբեր մէկն է, զինուորական հրամանատար մը, որ ծանրակշիռ կարգադրութիւններ ունի ընելու անյապաղ, որոշումներ տալու, որք անվրէպ սրամտութիւն և հաստատուն կամք կը պահանջեն շարունակ։

Հոս իսկ առաջնութիւնը չը զլացուիր գեղեցիկ սեռին։ Բայց քիչեր չեն նաեւ թեթեւ սեռէն անհամբեր ոմանք, որք պատեհ առիթները չը փախցնելով սանդուխն ի վեր դէպ ի կառքին վերնայարկը կը շլուին մերթ ընդ մերթ։

Կառք մը կը լեցուի, ուրիշ մը, ապա ուրիշ մ'ալ։ Խարազանները կը ճօճեն օդին մէջ, կը շառաչեն։ Յաղթանդամ ձիերուն բոժոժներն կ'սկսին իւրեանց ներդաշնակ երաժշտութիւնն, և կը մեկնիմք քրքիջներու, ծիծաղներու, կատակներու մէջ։ Ո՛չ ուրեք այնքա՛ն սրտաբուխ, այնքա՛ն փոխանցիկ, այնքա՛ն կազդուրիչ ու հեշտալի է զուարթութիւնն որքա՛ն բնութեան ծոցին մէջ։

Արկածավայրին մօտեցած ենք։ Հոն կ'ուղղուի մեր ամենուս ուշադրութիւն, երբ կառապանն կ'սկսի կրկնել և մեզ, ինչ որ բազմիցս կրկնած էր անշուշտ ուրիշ հետաքրքիր անցորդաց, արկածին նկարագրութիւնն, այլ և այլ մանրամասնութիւններով։

Տեսա՞ծ էք այնպիսի տեղեր, ուսկից լեռնային հեղեղ մ'անցած է դեռ նոր տիղմ, խիճ ու աւազ, ամեն մեծութեամբ ու ձեւով քար ու կոճղեր թողլով իւր ետեւ։ Այսպիսի տեսարան մ'է որ կը պարզուի մեր աչաց առջեւ, և սիրուն վտակ մը այս խառնափնդոր կոյտերուն մէջէն կը սողոսկի մռմռալով ա՛յնքան հեզիկ, անմեղ ու խաղաղէր։

Կատարեալ ամայութիւն. տուն մը կը տեսնուի մէկ եղերքը ատկնիվրայ տղմին մէջ խրած. ժայռի մը կրթնած, ուրիշ մը որոյ պատերը թափթփեր են, և մինչեւ տանիքը ցեխով ներկուած։ Քանի մը ծառեր կան արմատախիլ ոստաքանից աստ անդ ցրուած, որպէս տխեղծ դիակներ պատերազմի մի դաշտին վրայ։ Այս է ամենը։

Այլ սակայն զուարթ գիւղակ մը կար հոս դեռ քանի մը օր առաջ, ծաղկազուարճ ածուներ, ցորենի և բանջարի փոքրիկ արտիկներ, զորս ժիր մշակն կը խնամէր գուրգուրանօք, գեղուղէշ մայրիներ, որոց հովասուն ստուերին տակ կը հանգչէր ալեւոր ծերուկն կամ կը հրճուէր զբօսասէր մանկտին։

Այս տան մէջ, միակ տան մէջ որ կանգուն մնացած է, թէեւ կիսաւերած, կը բնակէր իւր մէկ բարեկամ ընտանիքն, կը պատմէ մեզ մեր կառավարն։ Այրը բացակայ էր այդ գիշեր։ Մայրն դեռ նոր պառկած էր իւր զաւակաց հետ, երբ ընդոստ կը սթափի յանկարծական գլգլիւնով մը, որ կը սաստկանար հետզհետէ։ Յաւերժական ժայռերն էին թերեւս որ կը խորտակուէին։ Ծովանման հեղեղ մը գոռալով գրգռուելով կը շրջապատէ իւր բնակարանն։ Անկարելի էր դուրս փախչիլ։ Իւր զաւակներն առած դէպ ի վերի յարկը կը խուսափի։ Ջայնն հոն ալ կը հետեւի իրենց վաղընթացս։ Աւելի վեր նոյն իսկ առիքին մէջ երդիկին մօտ անկիւն մը կը բըբըչի։ Կը կծկուի խեղճ կինը՝ իր մանուկներն իր սրտին վրայ սեղմած։ Գոռում գոչում կը շարունակէ իր շուրջն։ Ի՛նչ պատահած էր. ի՛նչ պիտի պատահէր յաջորդ վայրկենին, ի՛նչ գիտէր թշուառ կինը։ Եւ հոն ժամերով կը մնայ վախէն սրմքած, մինչեւ որ կը հասնին ազատել զինքն հետեւեալ առաւօտուն։ Ինքն իսկ կրնա՞ր արդեօք ապա պատմել այն տառապանքն որ այս անձկալից ժամուց մէջ կը կրէր, կը պրկէր իւր սիրտն։

Մօտը դեռ կը մնայ քարաշէն փոքր կամուրջ մը, որ դէմ դրած էր այն բուռն հեղեղին, որոյ առջեւ տեղի կուտար գրեթէ ամեն ինչ։ Քիչ մը վերը բլրակի մը վրայ ստուարախիտ ծառոց տակ պահուըտած կը կանգնի սիրուն փոքր պանդոկ մը, ուր կ'երթամք հանգչիլ ու ճաշել։

Սիրտ չունինք այդ աղէտին վրայ խօսելու պանդոկապետին ու իր ընտանիքին, որ ականատես եղած էին տեսարանին։ Այդ կամուրջէն քով վազեցինք, կ'ըսեն, երբ ահագնագոռոց գոռումն արթնցանք, և դեռ կը խուժէր այն ծովացեալ հեղեղն։ Ժայռերու հատորներ ընդ որս և յօշոտուած, բզըքտուած մարդկային մարմիններ խառն ի խուռն կը դիտորէին այդ տեղէն, ուր կամուրջը կարելի չէր տեսնել։

Զարմանալի չէ որ այդ ահռելի տեսարանն երբ քամհելի մղձաւանջ մը կը հետեւէր իրենց գիշեր ու ցերեկ, սարսուռ մը սփռելով իրենց բոլոր մարմինոյն մէջ։

Հիմա անտառի մը մէջ կը խրիմք այցելելու համար աւերակներն այն մեծաշուք պանդոկին, ուր ամենէն մեծ դերը կատարած էր այս արկած։

ԱԲՐ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ
(Շարունակելի)

ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Մոսկուա 14 սեպտեմբերի 1883

Բարկացել էք, տիկին, ինձ դէմ, որ բեմը թողել պարապում եմ նկարչութեամբ. Իրաւունք ունիք, բայց ինչ անէի, ո՞ւր գնայի, ո՞ւմ հետ ներկայանէի. Ասում էք, կամք լինի, ամեն բան կարելի է անել. այդ ուղիղ է. Բայց… եթէ փող չլինի՞, եթէ ճանապարհի ծախս անգամ մարդս չունենայ գրպանում. Ուսանողք բոլոր վերադարձան. իրենք էլ ցանկանում են, որ հոկտեմբերի սկիզբներին կարողանանք տալ առաջին ներկայացումը ի նպաստ նրանց, և երկրորդը՝ «Բ»՝ ի նպաստ ինձ, որն որ արդէն կիսով չափ գիտեմ. յետոյ պիտի գնամ Պետերբուրգ. Իմացէք, տիկին, որ որքան էլ խեղճ լինի դրութիւնս, երբէք անպատիւ մի բան չեմ աներ. գիտեմ սիրել ու յարգել առաքինութիւնը և ազնիւ ձիրքերն ու սիրտը. եթէ մինչեւ անգամ ցնցոտեաց տակ ծածկուած լինէին արտաքին գեղեցկութիւնը կամ չքնաղութիւնը, երբէք չեն չլացներ իմ աչքերը. Չէ՞ որ մենք մարդուս ներքինը յարգողներից ենք, եթէ լաւ է. Դուք գիտում և քաջալերում էք այդ, իսկ ես՝ գիտում եմ և ուսումնասիրելով ներկայացնում.

Այս ձմեռս անցնելուց յետոյ վերջին հաստատ որոշումս է Պոլսից ուղղակի գնալ Պարիզ.

Մոսկուա, 14 նոյեմբերի

Մի շաբաթ առաջ ստիպուեցայ գնալ Նիժնի-Նովգորոդ գաղղիերէն լեզուաւ մի դրամա ներկայացնելու համար ռուսաց խմբի հետ. Մեծ յոյսեր ունէի, բայց իմ բաժինս միայն 50 ր. ընկաւ. Երկրորդ օրը կուպերնատորը, երեւելի Բարանովը, հրաւիրեց ինձ իւր մօտ ճաշի, մեծ սիրով ընդունեց եւ փափագ յայտնեց ինձ ռուսաց բեմի վրայ միշտ տեսնելու, եւ բոլոր ընտանեօք ինձ ասացին, որ ռուսերէն սովորեմ. Ուզում էի ներկայացում տալ, սակայն երեք օրից աւելի չէի կարող բացակայ լինել Մոսկուայից, ուր տալիք ներկայացումս յայտարարուած էր.

Մոսկուա, 30 նոյեմբերի

Երէկ ներկայացրի Քինը, առանց 5րդ արարուածին, որովհետեւ թէ այստեղ և թէ Գաղղիայում չեն ներկայացնում այժմ 5րդը. Իմ բենեֆիսն էր. Ինչպէս ներկայացրի, կարող էք լրագիրներից իմանալ. իսկ գալով հասոյթին՝ 400 ր. ծախք և 300 ր. մնաց ինձ. ողորմելի գումար. Ինչպիսի՜ նեղութիւններ եմ կրել այս երկու շաբաթը. բժիշկը մինչեւ այժմ թոյլ չէ տալիս պուլիոն անգամ խմել. անկողնից փորձ էի գնում և փորձից՝ անկողին. Վերջին երկու օրը փորձի էլ չկարողացայ գնալ և երէկ վարագոյրը չի բացուած կենդանացայ. Միւս ամսին պիտի ներկայացնեմ Կոյր. Պետերբուրգ գնալ ուզելս մի միայն արթիստի անձնասիրութեան խնդիր է և ոչ շահու.

Պետերբուրգ 14 յունուարի 1884

Այսօր 5րդ օրն է, որ գտնւում եմ այս բազմամարդ, ընդարձակ եւ փառաւոր մայրաքաղաքին մէջ. Ուսանողներից, բաց ի երկուսը, ուրիշ ոչ ոք այցելութեան անգամ չեկան ինձ մօտ. Պետերբուրգի բոլոր լրագիրները ամսոյս 12ին արդէն յայտարարեցին իմ այստեղ հասնելը.

Պետերբուրգ 14 փետրուարի 1884

Ներկայացմանց նիւթական անյաջողութիւններից տկարութիւնս աւելի սաստկանում է. Բարոյական փառքի մասին աւելիք չունի՞մ, անշուշտ կարդացիք Նովոյի և Պետերբուրգի այլ լրագիրների մէջ. բայց եթէ արթիստների փառքը խմորից շինուած լինէր, շատ լաւ կը լինէր, որովհետեւ երբեմն կարելի էր հացի տեղ ուտել. Այս նեղութիւնս մոռացնում է գտած փառքիս հաճոյքը. «ամեն փայլածը ոսկի չէ». Անվերջ գալիս են այցելութեան, մի քանիսը իրենց ալպոմները բերում են, որպէսզի այստեղ դնեմ ստորագրութիւնս հայերէն, ռուսերէն կամ ֆրանսերէն. Պատկերս գնում են անծանօթ մարդիկ եւ բերում են որ շնորհք անեմ ստորագրել, իսկ ես այս բոլորի վրայ ծիծաղում եմ, մանաւանդ երբ փող չունիմ. Շատ շատ լինում եմ ճաշի Սամսոնովի մօտ. Այստեղից մտադիր եմ գնալ Աստրախան. Բեռնին ծայր նեղութեան մէջ եմ. Ցուր ներկայացումս, մեծ յաջողութեամբ մնաց միայն 100 ր. Շատ կոտրած սրտով պէտք է մեկնել այստեղից.

Թամբով, 8 մարտի 1884

Աստրախանի մէջ գտած ընդունելութիւնս, անյուսալի կեանքս, անցաւոր ուրախութիւնս և մշտաւոր տագնապներս այստեղ, այս նամակիս մէջ դժուար է տեղ գտնել գրելու համար. Աստրախանից ուզեցի գնալ Նիժնի, ուր տօնավաճառի առթիւ այժմ շատ հայեր կան, սակայն ստացած հեռագրիս պատասխանը չառի. Ստիպուեցայ գնալ Թամբով, յետոյ Ռոսսի գիւղ.

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԿԱՂԱՆԴԻ ՅՈՒՇԱՎԷՊ

Արեւը դեռ մարը չէր մտած՝ երբ դպրոցէն ելաւ Արշակ, սիրուն պզտի տղեկ զոր բնութիւնը օժտած էր մանկունակ ամօթխածութեամբ ու այն տեսակ մի պարզմիտ հանգամանքով որուն տէր եղողները հասարակութենէն կը մկրտուին «լեղ» մակդիրով։ Բայց տղայ մը չը պիտի կրնամ զուրցել իրեն, որովհետեւ անոր անտիական կազմին մէջ չէր նշմարած ճիզմ գնդերներու ներոյժ եռեւեկը։

Ծնողք չունէր։ Ու այն մտածումը թէ այդ տարիքն ունեցող որբը վշտին ի՛նչ բան ըլլալուն խելահաս չէ, բանականութենէս հերքուած էր ալ՝ տխրութեան և զգօնութեան այս իրական պատկերով։

Հօր մը պէտքը… բայց հայր բառն իսկ անուանական բան մըն էր իրեն համար որուն կարօտը չէր քաշեր բնականաբար, թերեւս անոր համար որ ինք դեռ եւս աշխարհ չեկած՝ անիկա մշտնջենապէս կը բացակայէր արդէն։ Մօր համար ալ նմանապէս, ինչու որ անոր տեղը բռնող կար, մորաքոյրը։

Սակայն չեմ գիտեր ինչո՞ւ կայլայէր իր դէմքը, ինչո՞ւ ներքին թագուն յոյզերու կ'ենթարկուէր՝ երբ հարցուէր իրեն. «Ծնողք ունի՞ս»։ ու յաճախ ուսերու վեր ամբարձումով կը բաւականանար, որ առեն սիրտը սեղմուած՝ լալը միայն կը պակսէր հեգ տղեկին։ Իր արտաքին երեւոյթը՝ անգիտակից վշտակիրի մը տպաւորութիւնը կը թողուր վրան։

Մայրիկը յաւիտենական չուն բռնած պահուն չէր մոռցած քրոջը պատուէր տալու, հոգեվարքի տագնապներով կերկերաձայն.

—Բերուզի՛կ, քոյրս, ես կ'երթամ կոր, ամա չեմ ուզեր քի աչկըս էտիս մնայ… տուն մօր տեղ պիտի անիս… իմ տղուս պըլլի չընե՞ս պիտի. ծառքէդ էկածին խըրտար մակուրում մի՝ հաներ գաւկըներս… բուզգում քուրուկ, խօս աչկով չի նայի՞ս իրհնց…

Թշուառներու այս բերանացի կտակը կ'իրականանար արդարեւ պէտք եղածէն աւելի. այդ ազնուասիրտ քոյրը — պառաւ օրիորդ մը — իր խնամոտ տանտիկնութեամբ հազար նեղութիւններու դէմ գնելով օրը օրին կ'ապրուէր իրեններուն հետ, Արշակին, Վերգինին և Արաքսիին հետ,— երեք փոքրիկներ որ է՛ն տարիքոտը մանչն էր այլ զորս կը սիրէր հաւասար գորովանօք։

Բ.

Բարի մորաքոյրը տեսնելով հիմայ Արշակի մեծնալը՝ մտադիր էր զանի արհեստի մը տալ. այս պատրուակաւ քաշեց հանեց զանի դպրատունէն ուր ձրի կ'երթեւեկէր, խել մը «ութիւն»ներու մէջէն առանց պարզ ընթերցանութենէ զատ չնորհքով բան մը ուսած ըլլալու։

—Խոխարքէն գաւկին համար ինչ խըտա՞ր եռու պան՝ կըրել կարդալը, կը մտածէ նա իր կնոջական կարճամտութեանը մէջ ամփոփուած. Հէմ մեղքը չէ՞ Արշակս, գօրբ՞ ինչ է քի չօջօխին գէյնը տազլեմիշ ընել տամ…։

Ոսկերչութիւնը շատ յարմար դատուեցաւ, ամենէն «բիպարը», ամենէն «նազիք»ը արհեստներուն մէջէն, խորհած էր. ու իրեն թաղեցի Մարտիկ աղային քով դրաւ զայն, անոր ներկայութեան աւանդական բլոր մը կարդալով.

—Քե նայիմ, մանչըս, սեւերես չը մնա՛ս վարպետիդ քով…

Սեւերես մնա՛լ, ի՞նչ. բայց գէթ Աստուած ակնատես էր թէ գործէն դուրս ի՛նչ յոգնութեանց յանձնառու կ'ըլլար արտակարգ հլութեամբ և բացէն ի՛նչ գոհողութիւններ կ'ընէր՝ վարպետին աչքը մտնալու համար, իր նեղսասատ ու վազցասիկ վարպետին որ հինգ փարայի շահադիտումով չկային ամբողջ շրջաններն ընել կուտար խեղճ պզտիկին, շատ իրիկուններ ալ բեռնաւորելով զայն խոշոր պարկով մը որ կը փոխադրուէր մինչեւ Իւսկիւտարի բարձունքն ուր կը բնակէին։

Զարմանալի՛ բան, չեղաւ օր մը որ Արշակ ոսկեգործանք ցուցնէր մօրքրոջը. աշխարհի մը Մարտիկ աղայի մասին ահաւոր ակնածանքէ զատ պաշտումի պէս բան մը կը զգէր նա, հեզիկ հնչիկ տակալով անոր խին, անոր ծեծին ու չարունակ տալպարհակ վարուելով անոր բոլոր քմայքներուն։

Արշակ ասակ չան պէս տառուժին փոխարէն երբ փոք կ'ստանար շաբաթական 15 դահեկան այդ ընչին թօշակէն էր որ փոքրիկ բաժ տունին յատկացուցած էր ծայրաստիճան խնայողութեամբ, թէեւ զուր ջանքեր իրոն ալ՝ «երկու ծոծը իրար բերելու»։

Գ.

Տարին կը տենար յամէ հետէ գործի էր Արշակ. Այժամանակամիջոցին իր գլուխ գաղած սրտի արդէօք քանի՛ անգամներ արիւններ էր վարպետին անտեղի սաստերէն, ի՛նչ սրտմտիկ էջեր մրոտուած կը մնային իւր տխուր կեղծութեան մէջ. և սակայն մէկուն մէկո՛ւն չէր բանար իր ցաւերը, միայն անոնք ի խուռն դատապարտելով սրտի — սպունգ մշտարքու որ կը ծծէր լեղին այց չէր քամուէր։

Առաւօտները կը լի չոգենաւով խանութ, իրիկուններն փթնով տուն. ահա իր ամենաւոր ժամերը, տեսակ մը անտեղիտալի պարտականութիւն զոր լծթիկ պէս հագած էր նա, թիկ մը որ անոր համար չէր ձեւուած որ անոր համար չէր շինուած։

Գործին յաջորդումը իսքալիքաւոր սահմանափակ երկրերականի «լէն-փո-կօ, կէն-օկօ»ն, նմանչն ժամերուն զոր առնելէ վերջ կը նայ որ նորէն միեւնոյն տեղը հասնէր եա։ յուսահատ Արշակենց կենցաղավարութիւնը, փառք Աստուծոյ, չունէր ներքոլելու կողմ մը, իբենք զէչ աղէկ ան չուքումն էր որ կը չքաւորուէին դարձ։

Տունին անուշութիւնը կարող էր սակայն ամէն վիշտ ամոքելու. քոյրերուն հրճիւ ի շրթունս «Սխպարի՛կ» յորջորջումը՝ հոգեկան անանկ հեշտազգեցիկ ցունց մը կ'ազդէր իրեն որ անկարելի է նկարագրել։

Հիմակ որ տարեգլխուն մէկ քանի օր էր մնացած՝ իւր ականջներն ամէն գիշեր կը լեցուէին ու կը լեցուէին անընդհատ անուանական կաղանդչէքներով. ու ներքին բերկրանքով պատարուն, անոնց ամէն մէկ բառին գլուխ կ'երերցուներ, խաբէական ձեւացիրքութիւն որու նպատակն էր քուրիկներուն սիրտը չը կոտրել։

Ցորեկներն երբ չուկայէն կ'անցնէր Արշակ՝ ի՛նչ հրաշ նայուածքներ կը նետէր ապակեպատ այն արկղիկներուն որոնց մինչեւ խել ճերմակ տեսակէն եթէ բուռ մը լեցուն ունենար գէթ՝ կրնար մարմնաւորել բովանդակ քանակը իր երազանքին ու բաղձանքներուն։

Դ.

Դեկտեմբեր 31ի իրիկունը Մարտիկ աղան տասնըմէկին արձրկեց աշկերտը. աս չափազանց հազուադէպ թոյլտուութիւն մըն էր։ Արշակ իր շաբաթականին հետ ամանորի բացառիկ պարգեւ մ'ալ ստանալով դուրս նետուեցաւ կրպակէն, չալակը զարկած՝ միրգերով մինչեւ բերանը լեցուն ճերմակ մեծկա՛կ տոպրակ մը զոր վարպետը պատուիրեր էր իրենց տունը տանիլ։

—Աստուած մէկ օրը հազար ընէ վարպետիս, ինծի սա հոգէն ազատեց հիմակ քի՛ի։ Ամա մտիկէս կանէր կոր քի կաղընտվան եէմիշնիս ինքը պիտոր առնէ։ Պախչի՛ն ա տուաւ, չէյրէ՛կ մը պախչիչ։ Մայրի ի՛նչ կ'ըսեն նէ թող ըսեն, իրեն համար խըրխաւ թէրս է ըսեն, խըրըսանմիշ ըլլայ նէ աթէշ բիւսկիւրմիշ կ'ընէ ըսեն. իմին վարպետըս պաչխա՛ սիրտ ունի իրաւ որ, խըճմըրտանքը՛ է վէսէյամ…

Շուկային ոլորքներէն ինչուան Պաղճէ-Գաբու եկած էր ծուռիկ մուռիկ քալուածքով, այս մենախօսութիւնը մրթմրթալով, անուշադիր՝ կառապաններու կոչերուն, ու մանաւանդ անուշադիր՝ հանրակառքի փողարներու խուլցընող գոչերուն։

Բան մը որ իւր ուշը գրաւեց՝ մարդերու այն հաւաքումն էր որ խռնուած էին Պոլսոյ մեծ վաճառատան առջեւ. Հինգ լոպէի չափ անոր ճոխ ու չքեղ ցուցափեղկը դիտելէ յետոյ ներս մտաւ. Պահ մը այդպէս կեցաւ, կռնակը պարկով, չըլմարած մնացած ներսի տարօրինակ խառնակութենէն ուր բազմաթիւ երիտասարդ յաճախորդներ յագուրդ տալ կը ջանային, քսակնուն բերանը քակած, իրենց քմածին տենչերուն և յեղյեղուկ փափաքներուն պապակին։

Մէջերնուն ինք գուցէ ամենէն հաւասարն էր իր… իղձերով, ու ամենէն չունեւորն՝ իր դրամով. Բայց ո՛րու հոգ, բաւ էր որ իւր կարողութեանը չափով աւարկայ մը պիտի կրնար գնել, ա՛ն զոր տեսած էր դուրսը՝ ցուցափեղկին մէջ։

Սանտր էր ատիկա, զոյգ մը կլոր գողտրիկ սանտրներ ոսկեգոյն, վրան բոլորակ ջնջապարդերով պսակաւոր. Արշակ փութկոտ պաշտօնեաներէն մէյուն մօտենալով անոնց գինն հարցուց արտորանքով. մէկ հատը 9 դրուշ էր. Գիտէր թէ այդ վաճառատունն երկար բարակ սակարկութիւն չէր վերցուներ, վճարեց ու դուրս ելաւ։

Ե.

… Մի՛ գուցէ կանթեղին դեղին ցոլքն ըլլար անոնց վրայի չիկրակ փայլունութիւնը, բայց չէ՛, պատրանք մը չէր ինչ որ կը տեսնէր իւր ափին մէջ, վերջին չոգենաւուն լապտերին աղօտ լոյսով։

—Հա՛ ա՛ ա՛, չիմտի չագտըմ իշի, կը մտածէր գգուշ շրջահայեցութեամբ, մէճիտիէ մը տուի, երկու քառաընօնց առի. սեբահէմ հէրիֆը թէք խուռուշնոցներուն տեղ չիֆթ մը չէյրէկ օսկի է տուեր. քիմին ուտուքընտա, ճէպէն խալիպ չըլրա՛ս եա։ Հէմ աերպիանմիշ չեմ ըներ, խանութին մէջ կէս լուս կէս մութ ըլլալուն փարկին չէ կացած։ Ծօ օ նէ՞ խավրա բոբ։

… Այն երկար ժամերը զոր ամէն օր ուշ ատեն չափչփած էր հեւալով՝ անյուսալի արագութեամբ բարձրացաւ նոյն գիշեր, չը սեպելով սալայատակին սուլալի ջխջխանքն ու այն բարկ փչումն որ, ինչպէս կ'ըսեն, արիւն կը չորցունէ։

Տարապայման ոգեւորութիւն մը կը ծփծփար իրենց թաղը. ջանջան «լօթէանո»ն ու թըփատացող թափը կը ձայնըրնէին իրենց խօլական անզգրում երաժշտութիւնը,—թէ որ կարելի է երաժշտութիւն կոչել համախռնումն աղմկայորդ եւ ոստոստուն խաղերու։

Անցորդին վրայ աղապատանքի պէս բան մը չի՞ թողուր նուագաւոր մուրիկներու այդ խմբակներն որոնք տարւոյն ատ գիշերը տունէ տուն, խանութէ խանութ պտըտելով գոռաւոր խոշոր լապտերներն ի ձեռին կ'եղանակեն միաձայնաւ յունական ծանօթ խնդերգը. «Այվասիլիս էռքէթէ…»։ Մինչեւ որ տուն հասաւ՝ ճամբուն վրայ, դէմն ելլող խումբին մէյմէկ տասնոց ձգեց Արշակ, միակ աւելցուկը զոր ունէր գրպանին մէջ… ոսկիներէն յետոյ։

Տան մէջ ամէն ոք տարապայման խընձիղով մը համակուած էր, թերեւս տարիներէ ի վեր չէին կրած այդ աստիճան հոգեթըթիռ զգայնութեան մը տպաւորութիւնը, Վերգինն ու Արաքսին իրենց գլխակիր նուէրներով գերերջանիկ, և Արշակ՝ անոնց տարափոխիկ ուրախութենէն բռնուած. Ճաշի ատեն երեքնին մէկ գացին համբուրել իրենց ջատուկ մորաքրոջ ձեռքը, ան ալ փոխադարձաբար օրհնեց սրտաղեղ մաղթանքներով իրենց «կէնճ աբէւը», փղձուկի երկու կայլակներ զսպել ջանալով աչքին կոպերուն տակ…։

Այդ պոռթկացող ուրախութեան պահուն Բերուզիկ հանըմ մէյմէկ գաւաթ ջրախաղան գինի տուաւ իրենց, դեղ մը— որովհետեւ այդ անունով հրամցուց—զոր առաջին անգամն ըլլալով բերաննին կ'առնէին. Կարմիր—ջուրը չուշացաւ իր ազդեցութիւնը ի գործ դնել. այտերնին չառագոյն ներկուեցան ու քիչ յետոյ իրենց ճըճիմ խրախը անձնատուր եղաւ այն անուշ մեղկութեան որ երեսին կուտայ ծիծղուն սրտայայտութիւն մը ու բերնին՝ շատախօսութիւն, այնպէս որ մօրքրոջն բաւեցաւ քմծիծաղով մրմնջել մեկուսի.

—Կատուներուն քացախ խմցուցինք…

Գիշերուան մինչեւ հինգը այնուհետեւ խնդացին, ճըլըլացին ու չաղփաղփեցին երեք բղեղները, հուսկ ուրեմն ենթարկուելով ռնգային աճառներու այն ներքին եռքին՝ որ մարդս կը փնտոայցնէ, բա՛ն մը ուզով Բերուզիկ հանըմ առիթ ունեցաւ աւետելու իրենց.

—Տղաքներ, տարիներդ հանեցիք։

Ու հիմա, մէջտեղ դրած Արշակի զոյգ մը անկածները (քէլէբիր) ու ցնծագին ականջ դնելով այդ «մանր կարմրուկ»ներուն հետաքրքրող պատմութեան, կը բաղձային գինդ, ապարանջան, մատնի եւ չինուիլ ատոնցմէ, կաչիկ կարճըճուկ կտորի պէս որ կը քաշքշուի կը պըկուի կօշկակարէն՝ անիկէ մէկ քանի զոյգ ոտնամանցու հանելու գոր ջանքով։

Զ.

Լոյսը դեռ նոր կը ճեղքուէր երբ Արշակ ցատկեց ելաւ անկողնէն, ընդոստ սթափելով այն մոլեքախ ապտակէն զոր չառաջածայն փակցուցած էր վարպետը… երազին մէջ։

Կը ձիւնէր։

Բնութիւնը հիմա լըւտ մ'էր դարձած որ իր վիթխարի աղեղով կը քըճքըճէր երկնքի բամպակէ ամպոց բրդուճներն որոնք պտուտաւոր իջուածքով վար կը թափթըփէին բզիկ գզիկ, բարդուելով համատարած ճերմակ վերմակին վրայ որ զոցես տակաւին բարակ կուզար՝ քնացող երկիրը ծածկելու պարտքիկելու համար։

Արշակին է՛ն առջի զբաղումը եղաւ փողոցին դուռը բանալ ու սեմին վրայի ձիւնը մէկդի ընելով՝ ոսկիները քարին վրայ ձգել մէկ քանի հեղ, քննելու համար անոնց հնչուածութիւնը։ Աչուըները խոշոր խոշոր բացած, անփոյթ այն պաղին որ իւր ակռաները կը կափկափեցնէր ու այն ձիւնին՝ որ գլխուն եւ ուսերուն վրայ կը դիզուէր անդորրիկ, չարունակեց միեւնոյն դիւային գործողութիւնը, չը կրնալով կանոնաւորել իւր տկար չնչառութիւնը ու սրտատրոփ հիւծնալով տենդահար…։

Այդ այլ յայլմէ եղած վայրկեանին էր որ իրենց պատկից Պապա Համբիկը հանկից կ'անցնէր տուիկ տուիկ, ծակծըկելով գետնի միապաղաղ կաթնորակ սաւանը որ կոյս էր մնացած դեռ անցորդներու հետքերէն։

—Հի՛շտ, ինծի նայէ, Պապա Համբիկ, աըվօնք ինտո՞ր փարաճէն, կը ճանչնա՞…

—Վօ՜րկէ առիր, ծօ Արշակ, յարեց գիմացինը՝ անթարթափ դիտելով պզտիկ դեղիններուն. խայլայ էն ասանք, խա՜լ, սօղրա չեմ խաանուիր….

Եւ մինչ այդ անորոզ յուսախաբութեան սարսափը սարսուռին՝ դէպ ի ներս կ'ուզղուէր՝ զփալով իր անխոհեմ ցրտառութեանէն, ստիպուեցաւ ետին դառնալ, խեղճը վիրաւորուած կոյրտ բացագանչութեան մը.

—Մօ բի՛ձ, երէկ իրիկուան տուած տօրպակս վօ՞ր տարիր…։ Որուն յաջորդեց այն մոլեքախ ապտակը զոր չառաջածայն փակցուց վարպետը, և այս անգամ իրապէս։

Իր առտուան մօտ տեսած երազը ո՛րքան շուտ եկած եղած էր…։

ԹԷՕՏՕՐ

Վատ անուն

ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՏՈՒԱՄ ՄԸ

Թշուառութեան ի՛նչ սրտաճմլիկ տեսարան այն որ, անցեալներ, ներկայացաւ Մէզօն-Պլանչ թաղի ոստիկանապետին, ի Փարիզ։

Քսանհինգ տարեկան մօտ կին մը, տժգոյն և դողդոջաքայլ, առաւօտուն կ'երթար Շուաղիի ծառուղէն, երբեմն կանգ առնելով անցորդի մը առջեւ որուն կը նայէր պաղատագին կերպարանքով։ Անցորդը կը շարունակէր իր ճամբան և կինը կը վերսկսէր իր ընթացքը, ի խնդիր ողորմութեան զոր չէր համարձակեր մուրալ։

Ցանկարծ, թշուառ կինը, կը դանդաչէ, հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ և կ'իյնայ մայթին վրայ։ Այն ատեն, անոր չուրջը կը փութան, դեղարան մը կը փոխադրեն զայն։ Բայց, աւա՜ղ, տրուած խնամքներուն հակառակ, հեգ կինը քիչ ատենէն հոգին կ'աւանդէ, յետին չունչին մէջ գոչելով. «Զաւկընե՜րս, խե՜ղճ զաւկըներս։» Ցուրտը և անօթութենէ մեռած էր։

Ոստիկանութեան քօմիսէրը կը կանչեն որ, մեռելին մէկ գրպանէն կը գտնէ բանալի մը և թուղթեր տիկին Տեգամոռի անուամբ, Մեծ Փողոց։

Ոստիկանապետը ցոյց տրուած հասցէին կ'երթայ և տարաբաղդ կնոջ բնակարանը կը մտնէ։ Դուռը երկիցս կղպուած էր։

Հազիւ ոստիկանապետը կը մտնէ ողորմելի բնակարանը, խորին յուզում մը կը զգայ։

Երկու խեղճ փոքր տղաքներ, երկու մանկիկներ, Մորիս եւ Էմիլ, առաջինն հինգ տարու և միւսը քսան ամսու, կը դողդղային, կիսամերկ, անկած այդ խուցին մէկ անկիւնը։

Էմիլ կուլար. մա՜յրը կը կանչէր. Անօթի՜ էր։ Ցուրտը քարացուցած էր իր անդամներն որք դեղնագոյն բեհեզով ծածկուած էին։ Եղբայրը կուրծքին վրայ կը սեղմէր զայն, ջանալով տաքցունել։

—Ա՛հ, խե՜ղճ տղաքներ, կը գոչէ ոստիկանապետը։

Արագօրէն կը հարցափորձէ զանոնք։ Երկու օրէ ի վեր չէին ճաշած, հէ՜ք մանկիկները։ Անմիջապէս ուտեստ կուտա՛ն անոնց, զոր խեղճերը կը լափէին։ Բատ կարի կը հագուեցնեն զանոնք եւ կառք մը դնելով Տանֆէռ-Ռօշրօ փողոցը կը տանին։

Հանրային մանկապաշտպան վարչութիւնն այժմ մօր տեղ պիտի բռնէ այդ մանուկներուն, որք ա՛լ տեսնելիք չունին իրենց մայրիկը։

ԱԼՊԷՐ ՏԷԼԷ

Ֆրանսա իր բեղմնաւոր վիպասաններէն մին ալ կորսնցուց։ Ալպէր Տէլէի քանի մը օր առաջ մեռաւ ի Փարիզ։ Արդէն մէկ քանի օրէ ի վեր ծանր էր վիճակն եւ անյոյս։ Ինքն իր դահիճը եղած է, վասնզի որոշ հիւանդութենէ մը չի մեռնիր, այլ քնաբեր դեղերու չարաչար գործածումէ։ Ամեն իրիկուն քլորալ կը կլլէր որ, սակայն, քուն չէր բերեր։ Արդէն բարոյապէս շատ կը տառապէր յորմէ հետէ յաջողութիւն չէր գտած իր վերջին մէկ վիպասանութիւնն, զոր գլուխ-գործոց մը կը կարծէր ինք։ Գրագէտի այս տխուր յուսավրիպումը դանակի հարուածի պէս կ'իջնէ անոր սրտին, որ սակայն չէր դադրած գրագիտական խանդով բաբախելէ, վասնզի իր մահուան օրն իսկ տակաւին ի գիր կ'առնէր Ժանն տ'Արքի վրայ բանաստեղծութիւն մը և թերթօն մը, առաւօտեան մեծ թերթի մը համար։

ԿԱՆԽԱՀԱՍ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Տասներկու տարեկան մանչ մը, Լուի Կորժըրօն, անձնասպան եղած է իր ծնողաց տունն ի Փարիզ։ Փոքրիկ Լուին ըստ սովորականին իր արդուզարդը կուտար երբ յանկարծ կ'ընդմիջէ իր գործն և մօրը վրայ կը վազէ խնդրելու որ հրաման տայ իրեն հագնիլ սիրուն հագուստն զոր իրեն ընծայած էին յունուար 1ին և զոր կիրակի օրերը միայն պիտի հագնէր։ Որովհետեւ տղուն խնդիրքն անպատեհ էր, տիկին Կորժըրօն թոյլ չտուաւ։ Տղան սաստիկ սրտնեղութիւն զգաց և իր բաժնին վրայ պնդեց լացուկումով։ Մայրիկն անողոք մնաց։ Բոլոր օրը՝ Լուիին դէմքը խոժոռ մնաց, և խօսք մը չհանեց բերնէն։ Երբ ճաշի ժամն հասաւ, ընտանիքը սեղան նստելու կը պատրաստուէր։ Լուին կանչեցին։ Տղան չպատասխանեց։ Մայրը՝ մտահոգ՝ սկսաւ փնտռել զայն և անմիջապէս գտաւ՝ նրբանցքի մը պատին կրթնած. մայրն ուզեց բազուկէն բռնել. բայց յետս ընկրկեցաւ սոսկումի ճիչ մը արձակելով. Լուիին բազուկն ինկած էր անշարժ. խեղճ պզտիկը մեռած էր։ Առտուան կրած մերժումէն չկրնալով ինքզինքը մխիթարել, փողկապն անցուցած էր նրբանցքի պատին մէկ գամէն և հոն, ապահով թէ զինքը չպիտի արգիլեն, կախած էր ինքզինքը։

Տիկին Կորժըրօն՝ զգացած ցաւէն՝ քիչ մնաց որ խենդենար։

ՎԵՐԵԼԱԿԻՆ ՀՆԱՐԻՉԸ

«Ֆրանքֆուրդէր Զայթունկ»ի ըսածին նայելով վերելակին հնարիչն է Անտրէ Կաէրդնէր, մեքենական թանգարանին հիմնարկուն ի Տրեզտա, ծնեալ 1654ին։ Կաէրդնէր, 1617ի միջոցները, խեղանդամ ըլլալով, հնարած էր այս մեքենան որով կ'ելնէր ու կ'իջնէր իր բնակարանին երեք յարկերը։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Դպրոցի մը մէջ փոքր տղայ մը կենդանաբանութեան դասին մէջ կարգին գլուխը անցաւ, վարժապետին հարցման ճշդիւ պատասխանած ըլլալուն համար։ Երեկոյին մեծ ուրախութեան մէջ էր։

—Ի՞նչ էր վարժապետիդ հարցումը, հարցուց հայրը։

—Հարցուց թէ կատուն քանի՞ ոտք ունի։ «Երեք հատ ունի» պատասխանեցի ես ալ։

—Է՛, այդ պատասխանիդ համար կարգին գլո՞ւխը ելար։

—Այո, վասնզի միւս տղայք «երկու հատ ունի» ըսած էին։

* * *

Դրամահաւաքը.— Էֆէնտի՛, այսօր կը վճարե՞ք սա փոքր հաշիւը։

Պարտականը.— Դուն ալ միշտ անյարմար ժամանակներու կուգաս։

Դրամահաւաքը.— Հապա ե՞րբ գամ որ ձեզ յարմարի։

Պարտականը.— Հոս չեղած ատենս։

* * *

Օր. Վ…— Հօրեղբայր, հեռագիր մը պիտի գրեմ, բայց չեմ գիտեր ինչպէս կընեն։ Կուզեմ մօրաքրոջս աղջկան իմացնել թէ չպիտի կրնամ Բարիզ երթալ զինքը տեսնելու։

Հօրեղբայրը.— Շատ դիւրին է։ Ճիշդ գրէ ինչպէս որ իրեն պիտի ըսէիր թէ որ հոս ըլլար։

Օրիորդ Վ…— Այնպէ՞ս է։ (Կ'առանձնանայ եւ կէս ժամ յետոյ հեռագիրը կը ցուցնէ)։

Հօրեղբայրը.— Օ, այս ի՞նչ է։ Ինծի նայէ, սիրելիս, այս հեռագիրը ղրկելէդ շատ աւելի աժան կըլլայ եթէ դուն անձամբ Բարիզ երթաս և իրեն տաս զայն։

* * *

Տիկինը.— Մարիամ, նպարավաճառը տակաւին չբերա՞ւ մաքարոնի։

Սպասուհին.— Բերաւ, տիկին, բայց ետ ղրկեցի։ Ամենուն մէջն ալ պարապ էր։

Տ. Ս. Մ.

Հրատարակուեցաւ ԱՐՔՈՒՆԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ի Գրիգոր Մարգարեանէ, մեզրազուշ լուսանկար պատկերովը։ Գիրքին հասոյթովը շիրիմ մը պիտի կանգնուի բարերն յիշատակ կնոջ գերեզմանին վրայ։ Այս նպաստակ գրքին մէն է որ ամէն վերայ գնէ այս գրքոյկէն։ Կեդրոնատեղին է Զարդարեան գրատունը, կը գտնուի նաեւ ամէն գրավաճառաց քով։ Որբանոցին կնիքը չկրող օրինակներն անվաւեր են։ Գին 5 դրուշ։ 393 6—20

ԼԱՆՕԼԻՆ
ՔՐԷՄ ՏԸ ԹՈՒԱԼԷԹ
ԼԱՆՕԼԻՆ

ԼԱԽԱԳՈՅՆ դարման ընդդէմ այրուածոց կեղեքուածներու։
ԳԵՐԱԶԱՆՑ մորթի պահպանման համար, մանաւանդ մանուկներու մասին, և գոյնի պահպանման։
ԼԱԽԱԳՈՅՆ դարման ընդդէմ մորթի հիւանդութեանց և ընդդէմ արիւներթութեանց։

Կը վաճառուի ամէն դեղարաններու եւ դեղօրէից ու անուշահոտութեանց մթերանոցներու մէջ։

Գործակալ եւ ներկայացուցիչ ի Կ. Պոլիս
Մ. Ս. ՑՐԷՕՅԼԽ
Կալաթա, Միրթէպանի փողոց, Գրնաճեան խան։ 398

ՅԱԿՈԲ ԳԱԲԱՄԱՃԻ
ՓԱՍՏԱԲԱՆ
(Արտօնեալ Իրաւագէտ)
LICENCIÉ EN DROIT
Գրասենեակ, Ղալաթիա, Խավեար խան, Թիւ 2
[Մեծ դրան վրայ]

Իւր երկարամեայ փորձառութեամբ, յետ տեսականին, կ'ստանձնէ ԴԱՏԱՑԻՆ ամեն կարգի գործեր—քաղաքային, առեւտրական, պատժական և Շէրիի—ՎԱՐՉԱՑԻՆ ամեն տեսակ խնդիրներ։

Փոխանորդութիւն ամսավճարի և տարեվճարի դրութեամբ։

Ցանձնառութիւն «գործադրելի» խնդրոց՝ առանց կանխավճարի։ Ամեն անոնք որ բարեխոժարին իւրեանց վստահութեամբ պատուել զինք, հաճին դիմել ի մասնաւորի,

Խորհրդակցութեանց համար, մինչեւ կէս օր, երեքշաբթի և հինգշաբթի։ Ուրբաթ ձրի։ 405 2—12

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Գունաւոր մաքուր տպագրութեամբ, ամենէն գեղեցիկն իր տեսակին մէջ։ 12 ամիսներու մէջտեղ դրուած է պլօք մը ամեն ազգի տօնականներով, կը տեսնուին խկոյն ամեն ազգաց տօները։

Պարտիզպանեանի քով, Րիզա փաշա խան, Պոլիս, Վրոյր եւ ընկ. Թղթավաճառանոցն Քօմիսիօն խան, Կալաթա։ 386 10—12

ԱՊԱՌԻԿ ՀԱՅԹԱՅԹՈՒՄ ԴԻՐՔԵՐՈՒ
ՊԱՅՄԱՆՔ ՎԱՃԱՌՄԱՆ
Գիրքերը կը տրուի Փարիզի գնով

100 ֆրանքի և աւելի պակաս ամեն յանձնառութեան համար վճարում մը պիտի ըլլայ ամսական
ՀԻՆԳ ՖՐԱՆՔ
Փոխադրութեան ծախքը գնողին վրայ է.
Մեզ հետ յարաբերութիւն չունեցող անձերէն կը խնդրուի որ երաշխաւորութիւն մը տան ամսական վրայ։
Ա. Տ. ՁՈՒՀԱՃԵԱՆ
Ղալաթիա, 10, Խավեար խան, Ղալաթիա 10,
334

5

ԻՆՉՊԷՍ ԿԸ ՇԱՀԻՔ
300,000 ՖՐԱՆՔ

Եթէ երկու ամիսը հեղ մը 5—10 դրուշ տալով մէկ երկու բրոմէս չը գնէք, հետեւաբար չէք կրնար մասնակցիլ Ռումէլ. երկաթուղեաց առաջնակարգ վիճակահանութեան։ Եւ եթէ չը մասնակցիք ի՞նչպէս կարելի է շահիլ 300,000 կամ ուրիշ ո և է գումար այն վիճակահանութենէն։ Այո, երկու ամիսը անգամ մը գնելու է բրոմէս մը, բայց դիտեցէք որ ձեր գնած բրոմէսը էն բաղդաւորներէն ըլլայ։ Գնեցէք ՏԻԳՐԱՆ Մ. ԱՐՁԸԵԱՆ բրոմէսներէն, որոնց շահած և գնողներուն վճարուած պարգեւները առաջին տեղը կը բռնեն հրապարակին վըրայ։

Ցառաջիկայ 1893 Եւր. փետրվ. 1 ին, այսինքն յունվար 20 ին պիտի քաշուի այս վիճակահանութեան 138 երորդը, և 600 հոգի պիտի շահին։

Եթէ ամբողջ բրոմէս մը գնէք, ինչ որ շահիք, ամբողջապէս կը ստանաք։ Եթէ կէսը գնէք, կէսը կը ստանաք և եթէ քառորդը գնէք, շահուածին քառորդ մասը միայն կը ստանաք։ Ամբողջ բրոմէսին գինն է 7 ուկէս, կէսինը 5 և քառորդին 3 դրուշ։ Գաւառներէն բօսթաի բուլ ալ կընդունուի, պայմանաւ որ գալիք ու երթալիք ապահովագրեալ բօսթային ծախքը գնողը վճարէ։ Հարիւր դրշ․ի մէկէն գնողին և ծախողներու դեղջ կ'ըլլայ։

Ղալաթիա կամուրջին գլուխը Թիւ 33
363 ՏԻԳՐԱՆ Մ. ԱՐՁԸԵԱՆ

ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՆՁՐԵՒՆԵՐԸ

Ձմեռուան էն գլխաւոր պէտքերէն մէկն է հովանոցը կամ անձրեւանոցը— ինչպէս որ կ'ուզէք։

Անձրեւին, ձիւնին ու փոթին ժամանակ դիմացկուն— «Բարակոն» եւ ''լորբիպս,,— երկաթներով ամուր շինուած հովանոց մը անշուշտ շատ աւելի կարեւորութիւն ունի քան իւր բուն արժէքը։

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՎԱՆՈՑՆԵՐ, արանց կանանց, մանչ եւ աղջիկ տղոց համար·բամպակէ, բուրդէ, բրդախառն մետաքսէ, եւ զուտ մետաքսէ կերպասներով ու պարզ, զարդարուն, կեռ, կոր, բնական արմատ, ոսկրէ, եւ արծաթապատ կոթերով, սիրուն ու ճաշակաւոր, կը ծախուին Ղալաթիա կամուրջին ճիշդ դէմը Թիւ 33 հանրածանօթ ''ԲԷՕՇԷ ՊԱՇԸ,, խանութը, ստրի տակ տեղ մը, ինչպէս կըսեն, ուր դիմող էն նրբաճաշակ անձինք պիտի գտնեն իրենց հաճելի լինելիք հովանոց մը։

Գիները··· աժան ծախել, շատ ծախել։

Ղալաթիա կամուրջին դէմ Թիւ 33, ''բէօշէ պաշը,,
ՄԻՀՐԴԱՏ Վ. ՀԱՅԿԱԶՆ
275

ՌՈՒՍԴԻ ՄՕՍԻՒ ՁԿ Ն ՍՇԱՐԱԿ
Կ. Պոլիս, 15 օգոս. 1889

Պարոնայք Ոգոդ և Պոսէն,

Ցորմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Ոգոդի Ոչարակը, միշտ լաւ արդիւնքներ ունեցայ մանկանց խուլյին և անօրինութեան հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ։

Իմ կարծիքս է թէ այս հաճոյ և յաջող պատրաստութիւնը միշտ նախամեծար համարուելու է Ոօռեւ ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն։

ՏՐ. Ա. ԱՆՏՐԷԱՏԷՍ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակի

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

"ՖԻՆԻՔՍ"

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000

Հիմնեալ ի Լոնտոն տարին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է, որոյ բաժնետուաց Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրներ են, ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և [illegible] վճարելոյ, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս [illegible] ապահովագրելոյ կրած վնասներն։

Հ. ՍՈՒՐԵՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11, և 12։ Սանսարեան խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերև։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆրանք	8,000,000
Պահեստի դրամ ցմրոյ յունիս 1890	»	6,165,860
Տարեկան հասոյթ	»	14,135,925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆրանք 6,250,000   Պահեստի դրամ ֆրանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև Թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այս նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկ. [illegible] [illegible] է երրորդեան 13 յարկ ապահովագրական հաստատութեանց հետ որոց գրաւ ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆրանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ–Գափու, Անմիրատոս խան. 12, 13, 14

369

Ամեն անոնք, որք կ'ուզեն ծխախոտի և Չինու ճշմարիտ թէյ խմել, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գափու, Ճէլալ պէյ խանի կից Թիւ 10 ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱՖՈՒԼԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր թէ՛ տեսակի ազնուութեան, թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և թէ՛ գինու աժանութեան կողմանէ անհամեմատելի են։

Ցեյլանի վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյավաճառաց քով կը գտնուին ի վերև դրուած մարքայով, որու կեղծերը եւած ըլլալով պէտք է զգուշանալ։ 342 33–50

ԼԱՆՔԱՇԱՅՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՄԱՆՉԷՍԴԸՐ

Հիմն. 1852 ին

Դրամագլուխ	Անգլ. Ոս.	3,000,000
91 դկ. 31ին ամենայն տրուած գ. մ.		1,771,006
1891 դեկ. 31ին պահեստ		1,635,903
Հասոյթ 1891 ին		1,851,329

Այս ընկերութիւնը ընդդէմ հրդեհի կապահովէ ամէն տեսակ շէնք, կաշ, ապրանք, ի Պոլիս և ի շրջակայսն ինչ պէս և նաւերու ապահովագրութեան։ Վնասի առթին արագ և բոլորովին վճարում։ Տեղեկութեանց համար դիմել առ. գործակալութիւնն ընկերութեան, 1 և 2 Իզզէթ փաշա խան, Ղալաթիա

ՌԻՉԱՐՏ Մ. ՊՈՆՏ
Ներկայացուցիչ
257 ՊՈՆՏ, ՍԷԼԼԸՐ ԵՒ ԸՆԿ.

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

- Բշ. 4/16 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։
- Գշ. 5/17 Աղեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակը ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէոսի ճամբով,
- Եշ. 6/18 Սեվաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
- Դշ. 6/18 Սուրհանդակ դէպի Փոքր Ասիոյ նաւահանգիստները մինչեւ պաթում, առաւօտեան ժամ 11ին։
- Եշ. 7/19 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ազդ.—Յունվ. 5/17, երեքշաբթի օրը կ'երթեն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ու, գնալով Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիփոլի Պէյրութ, Եաֆա, և Բոր-Սայիտ գալով դարձեալ։ 12

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլէ և Մէնչէսթրէն Պոլիս եկող նաւերու անուանք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Փանքրաս	4200	Սֆինքս	3000
Ֆէլիքս	4000	Թոնպին	3000
Օսմանլի	4000	Նեբթիւն	3000
Սէնտրըլ	3250	Բէրա	3000
Թինոս	3250	Լօթիւս	800
Մակեդոն	3250	Օլիմպոս	800
Մաքէտոնիա	3250	Դելթա	700

«Բէրա» շոգենաւը յունվարի 19 Լիվրբուլէն աստ կ'սպասուի ընդհ. վաճառքով։

Դիմել առ Թ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.
Ռեթիօ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
292 31 Ճէյմս Սթրիթ Լիվրբուլ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԱՑՈՒՄՆ Ա. ՀԱԱՍ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՈՑՆ

որ ի Ղալաթիա, փողոց Վօյվօտա, Նորատունկեան խան, Թիւ 6, 7 և 8

Զանազան և նոր բերդուրք, կանանց գլխու ծածկոցք, Սեդանի ծածկոց և անձեռոցներ, ձեռմակեզէնք, Սրփէչ, Թաչկինակ, անկողնոյ ծածկոց, Բօրսէ, կանանց շալիկներ, գինէրագգեստներ, և այլ տեսակ կանանց վերաբերեալ իրեղէններ. Անուշահոտ նիւթեր և այլն և այլն։

Կը խնդրենք արգոյ հասարակութենէն այցել մեր վաճառատունն ուր հետեւեալները կը վաճառուին աժան գիներով և յոյժ նպաստաւոր պայմաններով։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԻՆ 306

ՄԻՍԻՍ Ս. Ա. ԱԼԼԸՆԻՆ

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՄԱԶԻ ՆՈՐՈԳԻՉԸ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ըլլած մազերուն գոյն, փայլուն ու գեղ կուտայ։ Կը նորոգէ անոր կեանքն, ուժը և աճումը։ Գլխու Թեփը շուտ մը անհետ կ'ընէ։ Իր անուշ հոտը առատ է ու հաճոյ։

"Մէկ շիշ կը բաւէ։" Շատ փոքր ունեցան ամենքը որոնց մազերը պղնձագոյն մաղերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան։ Ներկ չէ. և ամենեւին չեան մը չըներ։ Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բարձր կենալ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ՄԻՍԻՍ Ս. Ա. ԱԼԼԸՆԻ Հաւնելով նորոգիչէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նաև Փարիզ ու Նիւ Եորք։ Կը վաճառուի ամեն սափրիչներու, անուշ իւղագործներու և սնգլիապի դեղագործներու քով։

Մեծաքանակ վաճառումն ի Պոլիս Բ. Հ. Քիւչիւքեան եղբարց քով, Եէնի Ճամի փողոց, 18, Պոլիս և Համտիոա Բաբուանս, Սիւքեւք Քալըբըլ, Ղալաթիա. Փոքրաքանակ վաճառումն Բ. Հ. Քիւչիւքեան եղբարց քով, Պոլսոյ կամուրջին գլուխը, 17, և Բերայի Մեծ Փողոց, 158, Քանձիւք, բրիտանական դեղարանը և Իզլեօփ, հասարակաց, Մեծ Փողոց Բերա, 433։

OREZZA

Հանքային ջուր երկաթախառն բրոգածով, ամենէն հարուստ երկաթի և ածխաթթուի մասին։

ԱՅՍ ՋՈՒՐ ՄՐՑԱԿԻՑ ՉՈՒՆԻ

ՍՏԱՄՈՔՍԱՑԱՒԵՐՈՒ—ՏԵՆԴԵՐՈՒ—ՔԼՈՐՈԶԻ—ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐԵԱՆ ՆՈՒԱԶՈՒԹԵՆԷ

ՑՈՒՌԱՑ ԵՒԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՄԱՐ

ԴԱՐՈՒՍ ՄԵԾ ԳԻՒՏԸ

ԷԼԻՔՍԻՐ ԿՈՏԻՆՕ արագապէս կը բուժէ Նրիկամանց, Ողնածուծի հիւանդութիւնները, Ինֆլուէնցան, Սնարիւնները, ծիւրեալները, և այլն. կ'երիտասարդացնէ և կեանքը կ'երկարէ։ Իսկապէս վերանորոգիչ տարր մըն է. արտակարգ զօրութեամբ և աննման առատութեամբ նոր արիւն մը կուտայ. Վնասակար հիւթ մը չպարունակելով, ամեն տարիքի մէջ կրնայ գործածուիլ, առանց ոեւ է վտանգի։

Շիշը 20 Ֆրանք. ի Փարիզ, Սէն Լազար փողոց, Թիւ 7, վարչութեան կեդրոնատեղիէն խնդրել Տքթ. Ժիւլ Լաֆաժի տետրակը, պատկաւոր Փարիզի բժշկական Համալսարանէն. այդ տետրակը պիտի ղրկուի ձրիապէս և առանց ճամբու ծախքի։

Ի Կ. Պոլիս կը վաճառուի Բանչիւեւ Բրիտանիկան դեղարանը։

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՌՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամէն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժուարանալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ, կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով մեր խնայածստակներն յումպէտս կը վատնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի Էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ, տասը ևն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք համեստ դրամագլուխ մը։

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆՔ 39

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Սիրքէճի, Հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ։

ՌՈՒԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՌԱՆՍ ՔՕՌՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի	4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	»	35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կաշ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ԶԵՂՉԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնել փափաքողք կը հրաւիրուին դիմել առ. 140

Ընդհանուր գործակալս Ծ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
Պահչէ Գափու, Մէյտանճըր սօքաք, Ռեթիօ խան

EMULSION SCOTT

(ՍԳՈԹԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԴՈՒՏ ԻՒՂ

Իփօֆօսֆիթ մը շոլ և սօտայով

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԹԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եօրք։

Խոթէն չափ ախորժահամ է

Մորթի ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէ զատ, իբրեւ ֆօսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճղճուտութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը մարսեն զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԷՆՍՄԷՐ ԵՒ ՀԻՐՇԷԼ

NEVRALGIES ՋՂԱՑԻՆ ԱՆԿԱՐԳ, ՄԵՂՐԱՆԻՔ, խիթք, և ցաւի բոլոր հիւանդութիւնք կը բուժէն Տ. Ք. ՔՐՕՆԻԷԻ ԱՆՏԻՆԷՎՐԱԼԺԻՔ դեղահատներով։ Տուփը 3 Ֆր.—Պատրաստող գործարանատէրը Միւլիթեան դրոշմը, կեդրոնատեղի Պեզ. Բոլլի, 23, Պոնէ փողոցի Փարիզ. ի Կ. Պոլիս Մէզրիքի և ընկ., դեղավաճառք, և ամեն շատ դեղարաններ.

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ
Լիվրբուլ-Հիւլ-Անվէրս, Կ. Պոլսոյ և Օտեսայի գծի

ԹՕՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Պալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Պանտէր	1700
Ապօլլօ	500	Կիդանօ	2200	[illegible]	1500
Արկօ	2300	Հօգօ	1400	Պօլօ	1000
Արիօսդօ	2000	Կրօտնօ	200	[illegible]	2800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Ռիալթօ	4400
Պօրօտինօ	2200	[illegible]	[illegible]	Ռինալտօ	3200
Պրավօ	2000	Հինտու	7000	Ռօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Հումպէր	1200	Ռօմէօ	2500
[illegible]	2600	[illegible]	5000	Ռօզարիօ	3500
[illegible]	2500	[illegible]	2800	Սալէրնօ	1000
[illegible]	2100	[illegible]	2000	[illegible]	2200
[illegible]	2000	[illegible]	4200	Սաֆօ	2000
[illegible]	2700	[illegible]	2200	[illegible]	2000
[illegible]	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
[illegible]	2500	[illegible]	4500	[illegible]	3000
Կօլօրատօ	3400	[illegible]	3000	Թասսօ	1200
Տիտօ	2500	[illegible]	1500	[illegible]	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	[illegible]	900
Տուրօ	4800	Մարգէլլօ	6500	[illegible]	5000
[illegible]	2100	Միլօ	2000	[illegible]	5000
[illegible]	1600	Մուրիլլօ	3100	[illegible]	3600
[illegible]	3000	[illegible]	2000	[illegible]	1000
[illegible]	1200	Օրլանտօ	3000	[illegible]	200
[illegible]	2600	Օթէլլօ	5000	[illegible]	200
[illegible]	800	[illegible]	4500	[illegible]	140
[illegible]	700	Օտտօ	2000	[illegible]	120
[illegible]					8000
[illegible]					8000
[illegible]					810

«Կրոտնօ» շոգենաւը, նաւապետ Ուտ, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասաւ։

«Հրաքօ» շոգենաւը, նաւապետ Բիքըրին, այժմ կը բեռնաւորի ի Հըլ ընդհանուր վաճառքով, և յունվար 14ին պիտի մեկնի ուղղակի Պոլսոյ համար։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ԻՒԹՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միւմհ խան Ղալաթիա
293

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՕԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1892 մինչեւ նոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	8	62	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48				
	Առաւօտ														Իրիկուն											
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս ...	6 00	6 30	7 00	7 30	8 30	9 ...	9 30	10 ..	10 30	1 ...	11 30	12	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ..	5 30	6 ...	6 30	...	...	...	..
Գում–գաբու ...	6 09	6 41	7 09	7 39	8 40	9 9	9 40	10 9	10 39	11 9	11 42	12	1 39	2 9	2 39	3 9	4 09	4 41	5 10	5 39	6 09	6 39	...	...	...	...
Եէնի–գաբու ...	6 13	...	7 13	...	8 44	9 13	9 44	10 13	10 43	11 13	11 46	12	1 43	2 13	2 43	3 13	4 13	4 45	5 14	5 43	6 13	6 43	...	...	...	..
Տավուտ փաշա ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա ...	6 19	...	7 19	...	8 50	9 18	9 50	10 18	10 49	11 19	11 52	12	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 51	5 20	5 49	6 19	6 49	...	...	...	..
Եէտի–գուլէ ...	6 23	6 53	7 23	7 48	8 54	9 20	9 54	10 20	10 54	11 23	12 09	12	1 53	2 20	2 53	3 23	4 24	4 56	5 25	5 55	6 23	6 55	...	...	...	...
Մագրիգիւղ ...	6 36	7 12	7 36	8 04	9 08	...	10 8	... ...	11 8	11 34	12 19	...	2 04	...	3 03	3 38	4 37	5 06	5 37	6 07	6 3	7 7	...	...	...	...
Այ Ստեֆանօ ...	...	7 26	...	8 12	9 17	...	10 17	... ...	11 17	11 44	... ...	...	2 13	...	...	3 47	4 47	...	5 46	6 17	..	7 16	...	..	...	..
Քիւչիւք Չէք. ...	...	7 36	...	...	...	...	... ...	... ...	... ...	11 53	... ...	...	...	...	...	...	...	...	...	6 26	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	1	33	35	37	39	41	43	45	47	49	61				
	Առաւօտ														Իրիկուն											
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք. ...	...		7 15	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	45	...	...		...	...	...	...	...	...	7 07	... ...	... ...	... ...	
Այ Ստեֆանօ ...	6 25	...	7 24	...	8 30	...	9 30	... ...	10 30	11 25	... ...	57	...	...	2 25	...	3 57	4 [illegible]8	...	5 58	...	7 22	... ...	... ...	... ...	
Մագրիգիւղ ...	6 34	13	7 3[illegible]	8 12	8 41	...	9 41	... ...	10 40	11 40	12 40	10	...	...	2 34	3 11	4 06	5 09	5 38	6 08	6 38	7 44	... ...	... ...	...	
Եէտի–գուլէ ...	6 50	7 24	7 47	8 24	8 53	9 25	9 53	10 25	10 52	11 55	12 52	24	1 52	2 25	2 50	3 22	4 21	5 3	5 52	6 22	6 52	8 07	... ...	... ...	... ...	
Սամաթիա ...	6 56	7 28	7 51	8 28	8 57	9 28	9 57	10 28	10 56	11 58	12 56	28	1 56	2 28	2 56	3 26	4 26	5 27	5 56	6 26	6 56	...	... ...	... ...	... ...	
Տավուտ փաշա ...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	..	...	...	...	...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	
Եէնի–գաբու ...	7 02	7 34	7 57	8 34	9 03	9 34	10 03	10 34	11 02	12 04	1 02	34	2 02	2 34	3 02	3 32	4 32	5 33	6 02	6 32	7 02	..	... ...	... ...	... ...	
Գում–գաբու ...	7 08	7 38	8 01	8 38	9 08	9 38	10 08	10 38	11 08	12 08	1 08	38	2 08	2 38	3 08	3 38	4 38	5 38	6 08	6 38	7 08	8 23	... ...	... ...	... ...	
Կ. Պոլիս ..	7 16	7 46	8 09	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	12 16	1 16	46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 46	6 16	6 46	7 16	8 32	... ...	... ...	... ...	

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պօլսէն Մագրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ [illegible] կառախմբաց մէջ միայն [illegible]

Ցնոր տնօրինութեան, Թիւ 8. 10. 14. 43. 47 և Թիւ 49 կառախումբերը մի վայրկեան մը կանգ պիտի առնուն ի Չէյթունպուռնու։